

ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

**ՀԱԶԱՐ ՈՂՋՈՅՆ,
 ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻՒ ՔԵԶ
 ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ,
 ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
 21-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ
 ԱՌԻԹՈՎ**

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Տօն է այսօր, Հայաստան Աշխարհի 21-րդ Տարեդարձը:
 Հայրենիքի եւ Սփիւռքի Հայ ժողովուրդը, արդարօրէն կը պատրաստուի այլ եւ այլ մակարդակներու վրայ տօնակատարելու Հայաստանի Անկախութեան 21-րդ տարեդարձը:

Դարեր երկար, աշխարհակալ կայսրութիւններու տրորող ներքաններուն տակ կոուսիմնորդարձած, հալածուած, բռնագրաւուած, կործանման սեմին հասած անվհատ Հայաստան աշխարհ՝ վերականգնեց անյուսօրէն կալանաւորուած իր անկախութիւնը, բուսական երկու տասնամեակ առաջ, 21 Սեպտեմբեր 1991ին, ի լոյս աշխարհ պարգեւով իր անկախութեան հանրաձայն ձեռնարկը, որ լոյս, լոյս, կորով ու խանդավառութիւն գեղուց հայու հոգիէն ներս: Հայ ժողովուրդը, իր հայրենիքէն ներս թէ օտար ափերուն՝ մոռցած գիրար քաժնող ներագային ամէն տարակարծութիւն, անհանդուրժողութիւն ու քէն, դարձած մէկ սիրտ, մէկ հոգի ու մէկ բունց՞ ամէն տարի, արժանաւորապէս կը տօնախմբէ իր Հանրապետութեան Անկախութիւնը, անոր գորացման ու յաւերժացման մէջ տեսնելով իր լինելիութեան առանցքային գրաւակները:

Հայրենիքէն ներս, Հայաստան Աշխարհի Անկախութիւնը կը նշուի փառաւորապէս, պետական միջոցառումներով: Տեղի կ'ունենան գերարդիական գեներով գրահապատուած ազգային բանակային օդային, ցամաքային ու ծերու միաւորներու տողանցներ, հայրենի Գաղափարային Երեսնամեակի քարտեզարարութեան հրապարակներու վրայ, ցոյց տալով հայ ժողովուրդի՝ հաւատարմօրէն, հերոսաբար ու մահուան գնով իր երկիրը պաշտպանելու անտեղատելի վնասականութիւնը: Կը կազմակերպուին հաւաքներ ու հիւրասիրութիւններ, ուր երկրէն ներս գործող օտար դիւանագիտական սպասարկութիւններու ներկայացուցիչներ կը ներկայացնեն իրենց շնորհաւորանքներն, ու քարեմադրութիւնները:

Սփիւռքեան աշխարհատարածքի վրայ, Հայաստանի Անկախութեան տօնակատարութիւնները:

ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ՀԱՅԵՐ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԻՆ



Հայաստանի Հանրապետության 21րդ տարեդարձին առթիւ ժողովրդային շքեղ փառատօն մը տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, Սեպտեմբերի 16ին, 2012, Կլենտէյլի «Վերտիկո Բար» ընդարձակ զբօսայգիին մէջ:

Արդարեւ, Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան 125-ամեակին նուիրուած հանդիսութեանց շարքի այս առաջին միջոցառումն էր, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան:

Տօնական տեսք ստացած լայնածաւալ հաւաքատեղին ժամադրովայրը դարձած էր ամէն տարի-

քի ու հասակի բազմազգար հաջորդներու, որոնք եկած էին հաղորդակից դառնալու օրուան խորհուրդին հետ:

Լոս Անճելըսի եւ Գալիֆորնիոյ տարբեր շրջաններէն ժամանածներուն մէջ կը գտնուէին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք.ի ներկայացուցիչ Արժ. Տ. Միքայէլ Քհնյ. Կիւրեղեան, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի աւագ հիւպատոսութեան Տիար Եղիա Մանսուրեան, ինչպէս նաեւ Սաքրամենթոյի ներկայացուցիչներու Տան եւ Ծերակուտական ժողովի ու Կլենտէյլի Քա-

ղաքապետութեան ականաւոր անդամներ, հայկական տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Յետ միջօրէին փառատօնի բեմահարթակէն կազմակերպուիչ յանձնախումբի անունով ելոյթ ունենալով վարդան Ամոլիկեան ու Թագուհի Օհանեան ջերմօրէն ողջունեցին ներկայ բազմազգար հասարակութիւնը, միաժամանակ շնորհակտրեցին մեր փառապանծ Հայրենիքի անկախութեան 21րդ տարեդարձը, մաղթելով բարգաւաճում, բարօրութիւն, դժուարութեանց յաղթահարում եւ փայլուն ապագայ:

Արժ. Տ. Միքայէլ Քհնյ. Կիւրեղեան ներկաներուն փոխանցեց առաջնորդ Յովնան Արք. Տէրախրեանի շնորհակտրութիւններն ու բարեմաղթութիւնները, ապա կատարեց սեղաններու օրհնութիւնը:

Յայտագրի գործադրութիւնն սկսաւ ընկերուհի Լենա Մանուկեանի կողմէ հնչած ԱՄՆ-ի եւ Հայաստանի քայլերգներով:

Պաշտօնական բաժինով յաջորդաբար ելոյթներ ունեցան նահանգային Ծերակուտի անդամ Գարօ Լու, Գալիֆորնիոյ Խորհրդարանի անդամներ Մայք Կաթօ եւ Անթօնի Փօրթանթիօ, Կլենտէյլ քաղաքի քաղաքապետական խորհուրդի անդամներ

ՊԱՊԸ ԱՇԽԱՐՀԻՆ ԾԱՆՕԹԱՅՈՒՅ ԶՄՍԱՌՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԸ ԵՒ ՅԱԿՈՒ ՍԵՂԱՊԱՐՏԸ

ՍԱՐԳԻՄՆԱՃԱՐԵԱՆ

Բենեդիկտոս ԺԶ. Սրբազան Քահանայապետին Լիբանան կատարած պատմական այցելութեան կարեւոր հանգրուաններէն մէկը հանդիսացաւ Զմմառու Տիրամօր Հայ Կաթողիկէ 263 ամեայ վանքը: Կարեւոր՝ մանաւանդ անոր համար որ այս այցելութիւնը համայն քրիստոնեայ աշխարհին ուշադրութեան եւ հետաքրքրութեան առարկան դարձուց Լեռնալիբանանի գեղատեսիլ եւ ծովահայեաց մէկ բարձունքին վրայ 1749-ին հաստատուած վանքը:

Պատահական չէր որ Կաթողիկէ Եկեղեցուց Պետը ուզեց ընդառաջել վանքի շրջաբակի մուտքին կանգնեցուած Յակոբ Մեղապարտի կիսանդրիին բացումը անձամբ կատարելու հրաւերին եւ այս առթիւ Զմմառու սիրոյ սեղանին շուրջ եւ լուսարձակներէ հեռու համախմբուած տեսնել Լիբանանի կաթողիկէ պատրիարքներն ու եպիսկոպոսները եւ անոնց ըսել որ Յակոբ վանականը, կոչուած մեղապարտ, մեզի համար օրինակ է աղօթքի, ձերբազատութեան նւթական արժէքներէ եւ հաւատարմու-



թեան հանդէպ Քրիստոս Փրկիչի: 500 տարիներ առաջ ան նախաձեռնեց Ուրբաթագիրքի տպագրութիւնը, կամուրջ մը ստեղծելով արեւելքի եւ արեւմուտքի քրիստոնեաներուն միջեւ: Անոր դպրոցէն կրնանք սորվիլ առաքելութեան իմաստը, ճշարտութեան քաջութիւնը եւ եղբայրութեան արժէքը միասնականութեան մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ՍԴՅԿԻ ԱՌԱՋԱՐԿԻՆ

Հայաստանի կառավարութիւնը հաւանութիւն տուած է ՍԴՀԿ-ի առաջարկին եւ Սեպտեմբեր 24-էն սկսեալ Երեւանի թիւ 14 հիմնական դպրոցէն ներս բոլոր դասարաններուն գուգահեռ պիտի գործեն սուրիական դասարաններ, ուր հայերէնէն բացի, բոլոր առարկաները կը դասաւանդուին արաբերէնով:

Դպրոցի շէնքը տրամադրած է Հայաստանի կառավարութիւնը, իսկ ուսուցիչները իրենց աշխատավարձ պիտի ստանան Կիլիկեան Բարեսիրական Միութեան կողմէ, որ կը հովանաւորէ Հայկալի Կիլիկեան ճեմարանը:

Սուրիոյ Հնչակեան Կուսակցութեան վարչութեան անդամ Վազգէն Մեսրոպեան, Սեպտեմբեր 19-ին կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին կարծիք յայտնեց, որ Հայաստան գտնուող աշակերտներու մեծ մասը կը փափաքի տեղափոխուիլ սուրիական ծրագրով

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱԼԻԵԻ ՍԱՖԱՐՈՎԵԱՆ «ՆՈՒԷՐԸ»

ԱՐՄՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ռամիլ Սաֆարովին արտա-յանձնելու եւ Ալիեւի կողմից ներ-ման արժանացնելու կապակ-ցութեամբ բանաձեւ ընդունելու համար պաշտօնական Պաքուս Եւ-րախորհրդարանին մեղադրել է հայկական լրբեխնդիր ազդեցութեան տակ ընկնելու մէջ:

Մինչդեռ անցած տարիներին, երբ միջազգային կազմակեր-պութիւնները կողմից պրո-ստրապէճական շեշտադրումներ պարունակող նման բանաձեւեր էին ընդունուում, տարատեսակ գործըն-թացներ ծաւալուում, ինչպէս օրի-նակ, 2004-ին ԵՆԽՎ-ում դարա-բաղեան հարցով տիրահոսակ յանձնաժողովի ստեղծումը, 2010-ին հենց Եւրախորհրդարանի կող-մից կիրառվեան յայտնի թիւ 1622 բանաձեւի ընդունումը, 2011-ին ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդի ոչ մշտական անդամ ընտրուելը, Ատրպէյճանը, չգիտես ինչու, չէր յիշում հայկական լրբեխնդիր եւ դրա կախարդական ազդեցութեան մասին:

Այս հանգամանքը ցոյց է տա-լիս, որ Սաֆարովին հայրենիք վերադարձնելու ու յատկապէս նրան ներում շնորհելու, մեծ շու-քով ընդունելու, գինուորական կոչումը բարձրացնելու եւ 8 տար-ուայ աշխատավարձը տրամադրե-լու միջոցով կատարած յանցա-գործութիւնն արդարացնելու արդ-իւնքում Ատրպէյճանն ինքն իրեն զգել է տեղեկատուական-քարոզչա-կան, դիւանագիտական փակուղու մէջ եւ նման անհեթեթ պատճառա-բանութիւններով ու մեղադրանք-ներով փորձում է դուրս պրծնել դրանից:

Սա նման է շախմատային պարտիալի այնպիսի դրուագի, երբ փորձելով իրացնել թուացեալ

յաղթողական առաւելութիւնն ու դիրքը, դրանից առաջացած ին-քանվատահոլութեան աւելցուելը, կող-մերից մէկը կատարում է անհաշ-ուենկատ քայլ, եւ յետոյ միայն հասկանում, թէ ինչ կարող է դա նստել իր վրայ:

Սակայն սխալ քայլ կատարե-լը, նոյն շախմատային տրամաբա-նութեամբ, դեռ չի նշանակում հակառակորդի անխուսափելի յաղ-թանակ: Դեռ պէտք է հասկանալ՝ այդ հակառակորդն ինքը տեսնու-մ է իրեն ընձեռնուած հնարա-ւորութիւնը կամ տեսնելու պարա-զայում՝ ունի՝ արդեօք այն իրաց-նելու բաւարար կարողութիւն եւ հմտութիւն, թէ՛ ոչ:

Հենց այս իրավիճակում է հիմա գտնուում հայկական կողմը, որը նոր-նոր սկսում է դուրս գալ իր թիկունքում եւ ի հեծուկ իրեն Սաֆարովին արտաչանձնելու եւ հերոսացնելու էմոցիոնալ-շոկային վիճակից: Այն ստիպում է վերաիմաստաւորել, թէ իրական-ում դիրքային ինչ առաւելութ-իւն է տալիս սաֆարովեան այս ատրպէյճանահոլագարական գոր-ծարքը եւ թէ ինչպէս կարելի է այն օգտագործել:

Նախ՝ Սաֆարովին աշխարհի առջեւ հերոսացնելը, որն ընդհա-նուր առմամբ ազեկվատ գնահատ-ուեց միջազգայի հանրութեան կող-մից, թոյլ է տալիս քարոզչական եւ դիւանագիտական ճակատնե-րում հետեւողականօրէն զարգաց-նել այն թեզիսը, որ ԼՂ հիմնահար-ցում Ատրպէյճանը ոչ թէ իր տարածքային ամբողջականութիւ-նը վերականգնելու կամ՝ դարա-բաղցիների ինքնորոշման իրաւուն-քը ստորադասելու նպատակ է հե-տապնդում, այլ ԼՂ-ի էթնիկ նկա-րագիրը փոխելու եւ «Ղարաբաղն առանց հայերի» իւրօրինակ օպե-րացիա իրականացնելու: Այսինքն՝

որ նրա իրական թշնամին ոչ թէ Հայաստանն է, այլ հայութիւնը՝ դրանից բխող բոլոր ռասիստական հետեւանքներով:

Սա պէտք է հնարաւորութիւն ստեղծի Գուրգէն Մարգարեանի գա-զանաբարոյ սպանութիւնը եւ դրա համար Սաֆարովին ազգային հե-րոս դարձնելը շաղկապել Պաքուի, Սոււկայիթի ջարդերի, Շահումեա-նի, Մարտունաշէնի հայաթափման հետ՝ դրանով առարկայօրէն ցոյց տալու համար, որ 1988-ից առ այսօր Ատրպէյճանը չի հրաժար-ուել հայերի նկատմամբ էթնիկ զտումների քաղաքականութիւնից:

Սա ոչ այնքան քարոզչական, որքան երկարաժամկէտ կտրուած-քով քաղաքական շատ յատակ ծրագ-րային մօտեցում է: Ինչպէս ցոյց է տալիս Արեւելեան Թիմորի, Քոսո-ւոյի, Հարաւային Սուդանի հարցե-րում միջազգային հանրութեան դրսեւորած վարքագիծը, ազգային ինքնորոշման հիմնարար սկզբուն-քը, որն ընկած է ՄԱԿ-ի կանոնադ-րութեան եւ Հէլսինկիի «Եզրափա-կիչ ակտի» հիմքում, առաջնային եւ ուղեւիշային է դառնում միայն այն ժամանակ, երբ միարժէքօրէն հասկանալի է դառնում, որ էթնիկ փոքրամասնութիւնների, սուեալ տարածքի ազգաբնակչութեան ֆի-զիքական ոչնչացումը մետրոպոլ-իայի սահմաններում եւ նրա կողմից անխուսափելի է:

Այսինքն՝ այդ էթնիկ միաւո-րին անկախութեան շնորհումն ըն-կալուում է նրանց անվտանգութեան ապահովման ամենահիմնական մե-խանիզմներից մէկը: Եթէ դա գու-զակցուի ԼՂ-ի հայութեան անկա-խութիւն ձեռք բերելու անխոցելի իրաւական բազայի վրայ, ԼՂ-ի ներկայիս կարգավիճակի ճանա-չումը միջազգային հանրութեան ընկալումներում կը սկսի դառնալ հակամարտութեան լուծման լաւա-

գոյն, ըստ էութեան, միջոցը:

Ալիեւը իր այս քայլով փաս-տացի ցոյց տուեց, որ հայերի սպանութիւնը ցանկացած ձեւով ոչ միայն արդարացուում, այլ նաեւ խրախուսուում է, հետեւաբար ԼՂ ազգաբնակչութեանը սպասուում է ուղղակի ֆիզիքական հաշուհար-դար ցանկացած այնպիսի դէպ-քում, երբ ատրպէյճիցիները ոչ թէ նոյնիսկ ԼՂ, այլ ներկայումս նրա անվտանգութեան երաշխիքը հան-դիսացող յարակից շրջաններ ներ-թափանցելու հնարաւորութիւն ու-նենան:

Խօսքն այստեղ չի վերաբե-րում, իհարկէ, այդ շրջանները պահելու կամ յանձնելու մասին: Այլ նրա, որ իր այս քայլով Ալիեւը նաեւ հիմնաւորեց, որ ԼՂ-ին յարակից՝ Ատրպէյճանի վարչա-կան տարածքները հանդիսացող շրջանները գտնուում են ԼՂ պաշտ-պանութեան բանակի վերահսկո-ղութեան ներքոյ ոչ թէ այն պատ-ճառով, որ հայերը պարզապէս տարածք են ուղղում խլել եւ օկու-պանտ են, այլ որովհետեւ դա միակ միջոցն է ԼՂ բնակչութեան ֆիզի-քական անվտանգութիւնն ապահո-վելու համար եւ առանց որի՝ Պաքուն անմիջապէս սկսելու է առնուազն ԼՂ-ի ողջ տարածքի հեռահար ուժեղացումը:

Այս տեսանկիւնից Սաֆարո-վին արդարացնելը եւ հերոսացնե-լը հայկական դիւանագիտութեանը հնարաւորութիւն է տալիս փաս-տարկուած ներկայացնելու, որ ան-կախ նրանից՝ ինքնավարութեան որքան բարձր կարգավիճակ է խոստանում դարաբաղցիներին Ալիեւը, դա ուղղակի խաբկանք է:

Նախ՝ Հունգարիայի փաս-տացի խաբելով եւ Սաֆարովի ազատագրկումն իրենց մօտ շարու-

Շար.ք էջ 18

ԻՍԿ ՍՊԱՆԵՑԻՆ ԵԼՈՅԹԻՑ ՅԵՏՈՅ

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

Սերժ Սարգսեանը բաւական հետաքրքրական օր էր ընտրել կառավարութիւնում տեղի ունե-ցած «անկեղծ խորհրդակցութեան» համար: Այդ օրը «Մենք կարող ենք» շարժումը Հայաստանում աղ-բահաւաքի օր էր յայտարարել՝ «Հայաստանն առանց աղբի» խո-րագրի ներքոյ: Դժուար է ասել, թէ արդեօք Սերժ Սարգսեանը մի-տոմնաստար էր որոշել այդ օրն անցկացնել խորհրդակցութիւնը կառավարութիւնում: Բայց, Սարգս-եանն այդ խորհրդակցութեան ըն-թացքում խօսում էր հենց Հայաս-տանը պատած աղբի մասին:

Միայն թէ խօսքը ոչ թէ կենցաղային, այլ կառավարական աղբի մասին է: Ընդհանրապէս, մեղմ ասած քննարկելի հարց է, թէ Հայաստանի ո՞ր աղբն է միւսի հետեւանքը՝ կենցաղայինը կառա-վարականի՞, թէ՛ կառավարականը կենցաղայինի:

Օրինակ, եթէ մաքրուի Հա-յաստանի պետական կառավարման համակարգը, դրա շնորհիւ զգալիօրէն կը բարեփոխուի Հա-յաստանի պետական կարգը, հասա-րակական համակեցութեան կանոն-ների համակարգը, հասարա-կութիւնը կը դրուի կենսագործու-նէութեան բոլորովին նոր պայ-մանների մէջ, իսկ այդ պայմաննե-րը կը բերեն նոր մտածողութիւն,

նոր վարքագիծ: Դրա արդիւնքնե-րից մէկը կարող է լինել այն, որ աւելի ու աւելի մեծ թուով քաղա-քացիներ կը հասկանան, որ պէտք է ազտոտել շրջակայ միջավայրը, վնասել բնութեանը:

Իսկ կարո՞ղ է արդեօք կեն-ցաղային աղբի մաքրումը բերել կառավարման համակարգում աղ-բի մաքրման: Տեսականում կարող է, որովհետեւ եթէ քաղաքացիին սկսի այլ կերպ մօտենալ շրջակայ միջավայրին, սկսի չհանդուրժել կենցաղային աղբը, ապա մի օր էլ նա կը սկսի լուրջ դիսկոմֆորտ զգալ կառավարական աղբից, եւ ձեռնամուխ կը լինի դրան:

Բայց, պրակտիկօրէն դա ի հարկէ առաւել քիչ հաւանական եւ նուազ արդիւնաւէտ տարբերակն է, որը եթէ հասնի էլ յաջողութե-ան, ապա շատ երկար ժամանա-կում, ինչը անշուշտ մեծացնում է դիմադրութեան ռիսկերը:

Ինչ խօսք, պէտք է գործել հնարաւորինս լայն ճակատով եւ միաժամանակ ջանք գործադրել Հայաստանը թէ կենցաղային, թէ կառավարական աղբից մաքրելու համար:

Բայց, գոտն պատճառահետե-ւանքային տեսանկիւնից, թերեւս առաւել արդիւնաւէտ տարբերակն այն է, որ մաքրուի պետական կա-ռավարման համակարգի աղբը, ին-չից յետոյ կենցաղային աղբի խնդիրն արդէն տեխնիկայի հարց է:

Իսկ հաւատա՞ց արդեօք հան-րութիւնը՝ թէ հայաստանեան, թէ ասենք միջազգային՝ որի դիւանա-գիտական ներկայացուցչութիւն-ները միացել էին «Հայաստանն առանց աղբի» ակցիային եւ մաք-րում էին մեր երկիրը կենցաղային աղբից, որ Սերժ Սարգսեանը ցան-կանում է մաքրել Հայաստանի պետական կառավարման համա-կարգի աղբը:

Համոզի՞չ էր արդեօք գայրոյ-թը «ատկատներին» նկատմամբ, որոնք պետական փողը սեփական գրպաններ տեղափոխող օպերացի-աներ են, գայրոյթը պիւտճետային փողի ծախսման այլ չարաշահում-ների, պետական գնումների համա-կարգի, ՊՆ համակարգում, առող-ջապահութեան ոլորտում առկայ կոռուպցիոն երեւոյթների վերա-բերեալ:

Իսկ ինչո՞ւ Սերժ Սարգսեանն այդ ամէնի մասին չէր մտածում աւելի վաղ, ու սկսեց նախագահի ընտրութեանն ընդառաջ, երբ ար-դէն աւելի պրակտիկ «գորաշարժ» սկսեցին նաեւ նրա հակառակորդ-ները կամ մրցակիցները: Ինչո՞ւ օրինակ Սերժ Սարգսեանն այդ նոյն թեմատիկան չշոշափեց Յու-նիսին, երբ նոր կառավարութիւն ձեւաւորեց, եւ առաջին նիստում ելոյթ ունեցաւ այն նախարարների առաջ, որոնց անունն առ անուն

Շար.ք էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ


ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆ

ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ «ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆ» Է ՈՐԱԿՈՒՄ



«Տիգրան՝, շատ բացասական եմ գնահատում, շա՛տ բացասական»։ Սերժ Սարգսյանը կը հանդիմանէ վարչապետին

Կառավարութեան հասցէին հնչեցրած Սերժ Սարգսյանի խիստ քննադատութիւնը ցոյց է տալիս, որ կողակցի, անօրինականութեան դէմ պայքարը շատ աւելի խիստ է լինելու, եւ բոլոր այն պաշտօնեաները, ովքեր լծացած են եւ չեն ցանկանում կամ չեն կարողանում իրականացնել նախագահի յանձնարարականները այլեւս չեն աշխատի: Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց իշխող Հանրապետական կուսակցութեան խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը:

Սեպտեմբեր 15-ին կառավարութեան անդամների եւ վարչապետի հետ ունեցած խորհրդակցութեան ժամանակ նախագահ Սերժ Սարգսյանը սուր քննադատութեան ենթարկեց կառավարութեան անդամներին, խօսեց պետական համակարգում առկա լուրջ կողակցի տեսլականներին կամ, նրա ձեռնարկած մեծ, «պետական բիւջէի հաշուին իրականացուող ատկատների մասին»: Սերժ Սարգսյանը, մասնաւորապէս, ներկայացրեց իր յանձնարարութեամբ նախագահի վերահսկողական ծառայութեան իրականացրած ուսումնասիրութիւնները պետական գնումների կազմակերպման գործընթացի վերաբերեալ, այն, թէ ինչպէս, օրինակ, պետական մարմինները ծանօթ-բարեկամներով տենդերներ են անցկացնում եւ պետութեան հաշուին շուկայական արժէքից թանկ գնումներ կատարում եւ գումարներ իւրացնում:

«Այս առումով ես կառավարութեան աշխատանքը, Տիգրան, շատ բացասական եմ գնահատում, շա՛տ բացասական: Մենք չորս տարի է քեզ հետ խօսում ենք էս թեմայով, չորս տարի ուղիղ, բայց պրոցէսները շարունակուում են: Յետոյ գնալու են մարդկանց հետեւից, ովքեր ատկատներ են վերցնում, գնալու են մարդկանց հետեւից, ովքեր իրենց քեռու տղային են բերում տենդերում յաղթեցնում կրկնակի բարձր գններով: Տարօրինակ է, մենք տենդերով ապրանք են ձեռք բերում, որ շուկայում աւելի է ժամն է: Մէ՞կը դրա համար պիտի պատասխան տայ, թէ չէ», - ասել էր նախագահը:

Այս ամէնը լսելուց յետոյ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց, թէ կը քննարկեն բարձրացուած հարցերը եւ այդ ամէնը կ'իրականացնեն. - «Բոլոր գնահատականները, որ դուք տուցիք, նաեւ սթափեցնող են, պարտադրում են մեզ բոլորիս էական փոփոխութիւններ կատարել մեր աշխատանքում», - ասաց նա:

Արձագանքելով Սարգսյանի սուր քննադատութեանը՝ Գագիկ Ծառուկեանի ղեկավարած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան (ԲՀԿ) խօսնակ Տիգրան Ուրիխանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նշեց, թէ ողջունում են, որ իրենց պնդումները դառնում են օրակարգային նաեւ քաղաքական մեծամասնութեան առաջնորդի համար: ԲՀԿ խօսնակը, սակայն, նշեց, թէ ցաւում է, որ վարչապետ Տիգրան Սարգսյանի սթափուելու համար անհրաժեշտ էին նախագահի «խրատադաստիրակչական արտայայտութիւնները»: Ուրիխանեանի համոզմամբ, իր պարտականութիւնները վատ կատարած ցանկացած պաշտօնեայ պէտք է պատասխանատուութիւն կրի՝ նուազագոյնը զրկուելով զբաղեցրած պաշտօնից:

«Պաշտօնանկութիւններ վաղուց պիտի լինէին եւ մենք վաղուց դրա մասին խօսել ենք», - ասաց նա: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանն էլ նախագահի քննադատութիւնները որակում է որպէս «նախընտրական թատերական բեմադրութիւն, որին ոչ ոք չի հաւատում»: Զուրաբեանի փոխանցմամբ՝ այս բեմադրութեան մէջ մի հետաքրքիր հանգամանք կայ՝ երկրի ղեկավարի ելոյթը պարզապէս ինքնախոստովանական ցուցմունք էր:

«Նա խօսում է ատկատներից, ասում է, որ դեռ կան մարդիկ, որոնք չզիտեն, որ արդէն ատկատ պէտք է տալ, այսինքն ոչ միայն վճարել են, բայց հիմա էլ շարունակում են վճարել, եւ դրա մասին երկրի գործող նախագահը նոյնպէս տեղեակ է, եւ նորից որեւէ քրէական գործ յարուցուած չէ, օրէնքը չի գործում: Տպաւորութիւն է ստեղծուում, որ ուղղակի երկար տարիների արտօնուած թաւանից յետոյ բանդայի ղեկավարը որոշել է ջղայնանալ իր իսկ կողմից ղեկավարուող թաւանչիւների վրայ: Այսպէս է, որ ընկնում են քարոզչական նպատակների հետեւից, մի քիչ էլ նեղն են լինում, անում են սխալներ, որոնք, ըստ էութեան, բացայայտում են իրենց էութիւնը», - ասաց Զուրաբեանը:

«Մա այն շրջանն էր, երբ ԽՍՀՄ-ն անկում էր ապրում, կաշառակերութիւնը հսկայական էր, միւս բացասական էր, միւս բացասական էր երեւոյթները նոյնպէս հսկայական էին եւ յանկարծ մէկ-երկու օրուայ ընթացքում ամբողջ համակարգը փոխուեց: Ոչ մի պաշտօնեայ կաշառք էր վերցնում, յանցագործութիւններ հանրապետութիւնում չկային», - ինչեցրեց նա եւ բացատրեց, որ այդպէս էր, քանի որ ժողովուրդն էր ամէն ինչ վերցրել իր ձեռքը: Ըստ նրա, նոյնը վերադարձնելու համար շատ բան չի պահանջուում: «Այդ բանը կրկնելու համար Հայաստանին անհրաժեշտ է 24 ժամ», - ասաց նա եւ աւելացրեց, որ եթէ մի քիչ մտածեն եւ դա տեղի ունենայ, ապա ամէն ինչ ինքնուրուիքան կը ստացուի: «Այսինքն՝ եթէ ժողովուրդը պատասխանատուութիւն է գտնում, որ իշխանութիւնն իր ձեռքում է, եւ ինքը պատրաստ է յանձնել այն, ապա ինտենսիւ շրջանակներ են ստեղծուում, թէ ինչը, ինչպէս անել: Այդ ժամանակ առաջարկուում են ելքեր եւ համակարգը գործում է: Նման անցման կարելի է շատ կարճ ժամանակում հասնել», - ասաց նա: Սերժ Սարգսյան-Ռոբերդ Քոչարեան հնարաւոր համագործակցութեան մասին Աշոտ Մանուչարեանը չի ցանկանում խօսել, քանի որ, ըստ նրա, դա անէծքի տարածքից է:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԶԱՄԱՐ ԱՆՅՐԱԺԵՇՏ Է 24 ԺԱՄ»- ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ

Հայաստանի հասարակական, քաղաքական եւ պետական ամենաարդիւնաւէտ համակարգը եղել է 1988-90 թթ-ին եւ այն կրկնելու համար անհրաժեշտ է ընդամէնը 24 ժամ. այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց «Ղարաբաղ» կոմիտէի նախկին անդամ, քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարեանը:

«Մա այն շրջանն էր, երբ ԽՍՀՄ-ն անկում էր ապրում, կաշառակերութիւնը հսկայական էր, միւս բացասական էր երեւոյթները նոյնպէս հսկայական էին եւ յանկարծ մէկ-երկու օրուայ ընթացքում ամբողջ համակարգը փոխուեց: Ոչ մի պաշտօնեայ կաշառք էր վերցնում, յանցագործութիւններ հանրապետութիւնում չկային», - ինչեցրեց նա եւ բացատրեց, որ այդպէս էր, քանի որ ժողովուրդն էր ամէն ինչ վերցրել իր ձեռքը:

Ըստ նրա, նոյնը վերադարձնելու համար շատ բան չի պահանջուում: «Այդ բանը կրկնելու համար Հայաստանին անհրաժեշտ է 24 ժամ», - ասաց նա եւ աւելացրեց, որ եթէ մի քիչ մտածեն եւ դա տեղի ունենայ, ապա ամէն ինչ ինքնուրուիքան կը ստացուի:

«Այսինքն՝ եթէ ժողովուրդը պատասխանատուութիւն է գտնում, որ իշխանութիւնն իր ձեռքում է, եւ ինքը պատրաստ է յանձնել այն, ապա ինտենսիւ շրջանակներ են ստեղծուում, թէ ինչը, ինչպէս անել: Այդ ժամանակ առաջարկուում են ելքեր եւ համակարգը գործում է: Նման անցման կարելի է շատ կարճ ժամանակում հասնել», - ասաց նա: Սերժ Սարգսյան-Ռոբերդ Քոչարեան հնարաւոր համագործակցութեան մասին Աշոտ Մանուչարեանը չի ցանկանում խօսել, քանի որ, ըստ նրա, դա անէծքի տարածքից է:

Իսկ թէ ինչու՞, Մանուչարեանը, հրաւիրուած մամուլի ասուլիսում առանց չափերտները բացելու, տուեց հետեւեալ բացատրությունները: «Պաշտօնանկութիւններ վաղուց պիտի լինէին եւ մենք վաղուց դրա մասին խօսել ենք», - ասաց նա: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէս (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանն էլ նախագահի քննադատութիւնները որակում է որպէս «նախընտրական թատերական բեմադրութիւն, որին ոչ ոք չի հաւատում»: Զուրաբեանի փոխանցմամբ՝ այս բեմադրութեան մէջ մի հետաքրքիր հանգամանք կայ՝ երկրի ղեկավարի ելոյթը պարզապէս ինքնախոստովանական ցուցմունք էր:

«Նա խօսում է ատկատներից, ասում է, որ դեռ կան մարդիկ, որոնք չզիտեն, որ արդէն ատկատ պէտք է տալ, այսինքն ոչ միայն վճարել են, բայց հիմա էլ շարունակում են վճարել, եւ դրա մասին երկրի գործող նախագահը նոյնպէս տեղեակ է, եւ նորից որեւէ քրէական գործ յարուցուած չէ, օրէնքը չի գործում: Տպաւորութիւն է ստեղծուում, որ ուղղակի երկար տարիների արտօնուած թաւանից յետոյ բանդայի ղեկավարը որոշել է ջղայնանալ իր իսկ կողմից ղեկավարուող թաւանչիւների վրայ: Այսպէս է, որ ընկնում են քարոզչական նպատակների հետեւից, մի քիչ էլ նեղն են լինում, անում են սխալներ, որոնք, ըստ էութեան, բացայայտում են իրենց էութիւնը», - ասաց Զուրաբեանը:

«Մեր մօտ ամէն ինչ պիտի կատարուի առաջ, որպէսզի ցոյց տան, որ ինչ-որ բան եղել է», - ասում է նա, ով կանխատեսում է կառավարութեան կազմի փոփոխութիւն մինչեւ տարուայ վերջ: Նրա կարծիքով՝ այս մասին է վկայում նաեւ կառավարութիւնում Սերժ Սարգսյանի անցկացրած խորհրդակցութիւնը:

«Իմ տպաւորութեամբ՝ լաւ բեմադրուած շուք էր, բայց կատարումը շատ վատն էր», - ասաց նա: ՆԺԿ առաջնորդն անհաւանական է համարում ընտրութիւնների ժամանակ Հայաստանի առաջին եւ երկրորդ նախագահների համագործակցութիւնը. «Մի քիչ-քիչ եմ հաւատում, որ նմանատիպ գործընթաց լինի պաշտօնապէս»: Իսկ կը մասնակցի՞ արդեօք Քոչարեանը առաջիկայ ընտրու-



«Ղարաբաղ» կոմիտէի նախկին անդամ, քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարեան

րութիւնը. «Քսան տարուայ մէջ ամենից անբարոյ գործը, որ տեղի ունեցաւ, դա ուսու Նիկոլայ թագաւորի սրբացումն էր եկեղեցու կողմից»: Սա այն թագաւորն է, որի հրամանով 905 թ-ին գնդակահարուեց խաղաղ ժողովուրդը միայն նրա համար, որ սրբապատկերներով գնացել էր նրա մօտ՝ փոփոխութիւններ կատարելու խնդրով»:

Ինչ այս մարդու հետ կատարուեց անէծքի տարածք է, ես հրաժարուում եմ խօսել անէծքի տարածքից», - ասաց նա:

«Հայ ազգային կոնգրէս»- «Բարգաւաճ Հայաստան» յարաբերութիւնները, կարծես թէ, Աշոտ Մանուչարեանի համար անէծքի տարածքից չեն, սակայն նա զարմանում է, թէ ինչու՞ է այս համագործակցութիւնը հետաքրքրում բոլորին, եթէ դրանով, ըստ նրա, ոչ մի փոփոխութիւն չի կատարուելու:

«ՀՀԿ-ԲՀԿ կը միաւորուեն, չէ՞ն միաւորուի, ի՞նչ տարբերութիւն, եթէ ոչ մի բան դրանից չի փոփոխուելու: Եթէ ՄԿԿ-ն լինի ԲՀԿ-ի տեղը միեւնոյնն է՝ ոչինչ չի փոխուի: Հերիք է սուտ խօսեք», - ասաց նա եւ եզրակացրեց, եթէ փոփոխութիւնը մնաց, այս երկիրը վերանայու է:

«Երկրի վիճակը ծանր է՝ լի մարտահրաւէրներով: Եթէ փողից հետ չենք կանգնում, դա մեզ սպանելու է», - ասաց Աշոտ Մանուչարեանը:

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ»- ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

2013թ. նախագահի ընտրութիւններից առաջ կառավարութիւնում փոփոխութիւններ են լինելու. Համոզուած է «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը:

«Մեր մօտ ամէն ինչ պիտի կատարուի առաջ, որպէսզի ցոյց տան, որ ինչ-որ բան եղել է», - ասում է նա, ով կանխատեսում է կառավարութեան կազմի փոփոխութիւն մինչեւ տարուայ վերջ: Նրա կարծիքով՝ այս մասին է վկայում նաեւ կառավարութիւնում Սերժ Սարգսյանի անցկացրած խորհրդակցութիւնը:

«Իմ տպաւորութեամբ՝ լաւ բեմադրուած շուք էր, բայց կատարումը շատ վատն էր», - ասաց նա: ՆԺԿ առաջնորդն անհաւանական է համարում ընտրութիւնների ժամանակ Հայաստանի առաջին եւ երկրորդ նախագահների համագործակցութիւնը. «Մի քիչ-քիչ եմ հաւատում, որ նմանատիպ գործընթաց լինի պաշտօնապէս»: Իսկ կը մասնակցի՞ արդեօք Քոչարեանը առաջիկայ ընտրու-



«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան

թիւններին. «Եթէ դուրս պահանջները լինեն, ապա Ռոբերդ Քոչարեանը կը մտնի ընտրապայքարի մէջ: Այս պահին այդ պահանջարկը չկայ»:

Ի դէպ, Արամ Կարապետեանը հաստատեց նախագահի ընտրութիւններին իր մասնակցութեան մասին լուրերը, սակայն յաւելեց, որ նախապէս պիտի դժուարութիւններ է ունենալու թեկնածու գրանցուելու հետ կապուած, ինչպէս նախորդ անգամները:

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՄԻԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՀՈՒՆԳԱՐԻԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒՄԸ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ»

Հայոց Ցեղասպանութիւնը ընդունելով միայն կարող է Հունգարիան կարգաւորել յարաբերութիւնները Հայաստանի հետ: NEWS.am-ի թղթակցի հետ գրոյցում նման կարծիք է յայտնել Հունգարիայի Հայ Ազգային Ինքնավարութեան փոխնախագահ Նիկողոս Յակոբեանը:

Մեկնաբանելով Հունգարիայի ԱԳՆ-ի ղեկավար Եանոշ Մարտոնիի՝ Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման եւ դրանում Հունգարիայի հայ համայնքի մասնակցութեան յայտարարութիւնը՝ Նիկողոս Յակոբեանը նշել է, որ Հունգարիայի իշխանութիւնները այս հարցով դիմել են համայնքին, անգամ խօսք է գնացել համայնքի ներկայացուցիչների Երեւան մեկնելու շուրջ: «Մենք հրաժարուել ենք մեկնումս», - յայտնել է Յակոբեանը, աւելացնելով, որ դրանից յետոյ Հունգարիան անմիջապէս դիմել է Հայաստանի Արտաքին գործերի նախարարին. «Ստեղծուած իրավիճակում ամենավատ վիճակում յայտնուել ենք մենք՝ Հունգարիայի հայերս: Մենք բազմաթիւ համատեղ ծրագրեր ունէինք, որոնք այժմ, ցաւօք, յետաձգուել են: Մենք

առաջնորդուած ենք այն որոշմամբ, որը կայացրել է Հայաստանի նախագահը», - նշել է Նիկողոս Յակոբեանը: Նրա խօսքով, այժմ Հունգարիայում հայ համայնքը ակտիւացրել է Հայոց Ցեղասպանութեան ընդունմանն ուղղուած քայլերը: «Հունգարիայի կողմից Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը միայն կարող է կարգաւորել յարաբերութիւնները Հայաստանի հետ», - ընդգծել է Յակոբեանը:

Յիշեցնենք, որ 2004 թուականի Փետրուարին ադրբեջանցի սպայ Ռամիլ Սաֆարովը Բուդապէստում կացնահարել էր քնած հայ սպայ Գուրգէն Մարգարեանին, որից յետոյ հունգարական դատարանի կողմից դատապարտուել էր ցմահ ազատազրկման: Երկու սպաներն էլ անգլերէնի դասընթացներ էին անցնում ՆԱՏՕ-ի «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագրի շրջանակներում: Այս տարուայ Օգոստոսի 31-ին Հունգարիան Ադրբեջանին յանձնեց Ռամիլ Սաֆարովին, ում Բաքու հասնելուն պէս ներում չնորհուեց եւ նա ազատ արձակուեց: Նոյն օրը Հայաստանի նախագահի որոշմամբ կասեցուել են դիւանագիտական բոլոր յարաբերութիւնները Հունգարիայի հետ:

ՈՉ ՀԱՅԱՆՊԱՍ ԲԱՆԱՁԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԿՐԿԻՆ ՄԱԿ-Ի ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Նիւ Եորքում կը մեկնարկի Միաւորուած ազգերի կազմակերպութեան (ՄԱԿ) Գլխաւոր ասամբլեայի 67-րդ նստաշրջանը: Այն կը տեւի մինչեւ 2013թ.-ի Սեպտեմբերի կէսերը:

Օրակարգի նախագծի՝ «Աջակցութիւն միջազգային խաղաղութեանն ու անվտանգութեանը» բաժնում ներառուած է «Իրավիճակը Ադրբեջանի գրաւեալ տարածքներում» հարցը: Ադրբեջանի կողմից ներկայացուած այս բանաձեւի նախագիծը վերաբերում է տուեալ տարածքներում միջազգային հումանիտար իրաւունքի նորմերի պահպանման անհրաժեշտութեանը: Այն վերջին առնուազն երեք նստաշրջանների օրակարգերում ներառուած է եղել, սակայն չի քննարկուել եւ այդ պատճառով ամէն անգամ տեղափոխուել է յաջորդ նստաշրջանի օրակարգը:

Դեռեւս 2010թ.-ի Օգոստոսի 29-ին Ստեփանակերտում պատահանելով ՂՂ-ի հակամարտութեան կարգաւորման խնդիրը ՄԱԿ-ում եւ այլ միջազգային կազմակերպութիւններում շահարկելու Ադրբեջանի քաղաքական ուղեգծի

վերաբերեալ հարցին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը նշել էր, որ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայի նստաշրջանի քննարկմանը ներկայացուելիք բանաձեւի «ընդունուելը կամ չընդունուելը չի կարող էական ազդեցութիւն ունենալ Արցախի եւ Հայաստանի ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական կեանքում, ո՛չ էլ անվտանգութեան բնագաւառում»: Նախագահը նաեւ կարծիք էր յայտնել, որ անգամ քննարկուելու դէպքում այդ բանաձեւին, հաւանաբար, կողմ կը քուէարկեն մի քանի տասնեակ երկրներ, որոնք մշտապէս համերաշխութիւն են ցուցաբերում Ադրբեջանի հետ: «Բայց վստահ եմ, որ բոլոր այն երկրները, որոնք ցանկանում են, որպէսզի այդ հարցը լուծուի խաղաղ ճանապարհով եւ բանակցութիւնների միջոցով, դէմ են քուէարկելու այս բանաձեւին: Առնուազն, գոնէ ձեռնպահ են մնալու, որովհետեւ նրանք շատ լաւ գիտակցում են, որ այդպիսի բանաձեւերի ընդունումը չի կարող որեւէ դրական ազդեցութիւն ունենալ բանակցային գործընթացի վրայ», - մասնաւորապէս ասել էր Ս. Սարգսեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄ Է ՄԴՅԿ-Ի ԱՌԱՋԱՐԿԻՆ

Շարունակուած էջ 1-էն
դպրոց:
«Մեր նպատակն այն է, որ այստեղ գտնուող սուրիահայ երեխաները չկորուին այնտեղի ծրագրերէն: Այսինքն՝ այն ծրագիրը, որ պէտք է գործէր Սուրիոյ մէջ, շարունակեն այստեղ եւ երբ վերադառնան Սուրիա հարցը չունենան եւ տարի չկորսնցնեն: Այս ծրագիրը համաձայնեցուցած ենք Սուրիոյ դեսպանատան հետ», - յայտնեց Վազգէն Մեսրոպեան:

Հնչակեան կուսակցութիւնը լուծած է նաեւ ուսուցիչներու հարցը. Հայլէպի մէջ գործող Կիլիկեան եւ մի քանի այլ հայկական դպրոցներու բազմաթիւ ուսուցիչներ այժմ Հայաստան են եւ կը դասաւանդեն սուրիահայերու համար ստեղծուած յատուկ դպրոցէն ներս:
Սփիւռքի նախարարութիւն տուեալներով, այսօր մօտ 2000 սուրիահայ կ'ապրի Հայաստանի մէջ: Վազգէն Մեսրոպեանի կարծիքով, սուրիահայերու թիւը կը հասնի 4-5 հազարի:

ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԸ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑՈՎ ԴԻՄԱԴՐՈՒՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ

Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը Երեքշաբթի, Սեպտեմբեր 18-ին իր նստավայրում ընդունել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին:

Երկու երկրների նախագահները քննարկել են առանցքային նշանակութեան միջազգային հարցեր: Ֆրանսիայի նախագահը կոչ է արել Ադրբեջանին միջոցներ ձեռնարկել Հայաստանի հետ փոխադարձ վստահութեան միջոցառումներ վերականգնելու ուղղութեամբ, որը կը նպաստի ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակում շարունակուող Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցութիւնների հաջող ընթացքին:

Ադրբեջանական պաշտօնական լրատուութիւնը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեանը վերաբերող հատուածին անդրադառնում է աւելի հակիրճ, նշելով միայն, որ քննարկուել են բանակցային կարգաւորման ներկայ փուլը եւ քայլերը, որոնք պէտք է

ձեռնարկուեն այդ ուղղութեամբ:

Ֆրանսահայերը, ինչպէս եւ խոստացել էին, բողոքի ցույցերով են դիմաւորել Ադրբեջանի նախագահին՝ պնդելով, որ Ալիեւի այս այցը յատկապէս անընդունելի է մարդասպան Ռամիլ Սաֆարովին ներում չնորհելուց եւ իր երկրում հերոսացնելուց ընդամենը օրեր անց: «Այս պայմաններում ընդունել Ալիեւին, նշանակում է նպատել նրա հակահայ քաղաքականութեանը: Ալիեւը, ով արհամարհում է միջազգային իրաւունքը, չպէտք է ընդունուի Ելիսեան պալատում, - յայտարարութեան մէջ նշել է Ֆրանսիայի հայկական կազմակերպութիւնների համակարգող խորհուրդը:

Ադրբեջանի նախագահի այցի առաջին օրը ֆրանսահայերը բողոքի միջոցառում են անցկացրել Մարսելի հայկական խաչքարի մօտ, իսկ բողոքի ցույցը տեղափոխուել է Փարիզ՝ Ադրբեջանի դեսպանատան առջև:

ՊԱՊԸ ԱՇԽԱՐՀԻՆ ԾԱՆՕԹԱՑՈՒՑ ՅԱԿՈՒ ՄԵՂԱՊԱՐՏԸ

Շարունակուած էջ 1-էն

Զմմառու վանք իր պատմական այցելութեամբ, Բենեդիկտոս Ժ.Զ. ապացոյցը տուաւ իր նախորդներուն՝ Բենեդիկտոս Ժ.Դ.ի, Բենեդիկտոս Ժ.Ե.ի եւ իր անմիջական նախորդին՝ Յովհաննէս Պօղոս Բ.ի հայ ժողովուրդին հանդէպ տածած սիրոյ զգացումով իր սոգորումին: Առաջինը՝ վերականգնած էր Հայ Կաթողիկէ Պատրիարքական Աթոռը եւ հաստատած Աբրահամ Արծիւեանի ընտրութիւնը իբրեւ գլուխը Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Եկեղեցիին: Երկրորդը՝ իբրեւ վկան Հայոց Ցեղասպանութեան, եղաւ արդարութեան ձայնը միջազգային բեմերէն լսելի դարձնող առաջին դէմքերէն՝ 10 Սեպտեմբեր 1915-ին շատ բուռն բողոքագիր մը յղելով օսմանեան կայսրութեան Մոհամէտ Ե. Սուլթանին, պահանջելով հայերու հալածանքներուն, տեղահանութիւններուն ու ջարդերուն դադարեցումը: Իսկ Յովհաննէս Պօղոս Բ.ի հայասիրութեան վկայութիւնները դեռ թարմ են իւրաքանչիւր հայու յիշողութեան մէջ:

Զմմառու Յաւաքին Տիրամօր Վանք այցելութեամբ եւ հայ առաջին հայատառ մատենախոսքի ստեղծութեան 500 ամեակին նուիրուած Յակոբ Մեղապարտի կիսանդրիին օծումը կատարելով, Բենեդիկտոս Ժ.Զ. վերահաստատեց Վատիկանի համակրութիւնն ու զօրակցութիւնը հանդէպ Հայ ժողովուրդին: Կեցուածք մը որ յատուկ նշանակութիւն կը զգենու Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ:

Հայրերուն,

Սիրելի ժառանգաւորներ, եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս, իմ խորին երախտագիտութիւնս կը յայտնեմ Ամենապատիւ եւ Գերերջանիկ Տէր Ներսէս Պետրոս Ժ.Թ. Կաթողիկոս Պատրիարքին իր հրաւերին համար եւ իր խօսքերուն, զորս ուղղեց ինձի, ինչպէս նաեւ այս տան մեծաւորին հանդէպ: Սրտանց կ'ողջունեմ բոլոր հրաւիրեալներս:

Աստուածային նախախնամութիւնը արտօնեց որ մեր հանդիպումը կայանայ Զմմառու Վանքին մէջ, այնքան խորհրդանշական Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ համար: Յակոբ վանականը, կոչուած մեղապարտ, մեզի համար օրինակ է աղօթքի, ձերբազատութեան նիւթական արժէքներէ, եւ հաւատարմութեան հանդէպ Քրիստոս Փրկիչի:

500 տարիներ առաջ, ան նախաձեռնեց Ուրբաթագիրքի տպագրութիւնը, կամուրջ մը ստեղծելով արեւելքի եւ արեւմուտքի քրիստոնեաներուն միջեւ: Անոր դպրոցէն կրնանք սորվիլ առաքելութեան իմաստը, ճշմարտութեան քաջութիւնը եւ եղբայրութեան արժէքը միասնակցութեան մէջ: Մինչ մենք կը վերակազդուրուինք այս ճաշով՝ սիրով պատրաստուած եւ առատաձեռնութեամբ նուիրուած, Յակոբ վանականը մեզի կը յիշեցնէ նաեւ թէ հոգեւոր ծառաւր եւ յաւիտենականութեան որոնումը պէտք է միշտ ապուին մեր սրտերուն մէջ: Որովհետեւ «Մարդ ոչ թէ միայն հացով կ'ապրի, այլ նաեւ ամէն խօսքով որ կ'ելլէ Աստուծոյ բեռնէն» (մատթ. 4, 4):

Սիրելի բարեկամներ, բարեխօսութեամբ Բարթողիմէոս եւ Թադէոս առաքեալներուն, եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի, կը խնդրենք Տիրոջմէ որ օրհնէ հայ հասարակութիւնը խստօրէն փորձուած տարիներու ընթացքին, եւ զրկէ իր հունձքին բազմազան մշակներ եւ սուրբեր, որոնք, շնորհիւ Քրիստոսի, ըլլան կարող փոխելու մեր ընկերութիւններուն դիմագիծը, բուժելու մահացած սրտերը եւ վերադարձնելու քաջութիւնը, ուժը, եւ յոյսը յուսահատներուն:
Շնորհակալութիւն:

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՍՐԲԱՋԱՆ ԲԱՅԱՆԱՅԱՊԵՏԻՆ ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍԲԸ ԶՄՍԱՌՈՒ ՎԱՆՔԻՆ ՄԵՋ
Ամենապատիւ եւ Գերերջանիկ Պատրիարքներ, Սիրելի եղբայրներ եպիսկոպոսութեան եւ քահանայութեան մէջ,
Սիրելի անդամներ Միջին Արեւելքի եպիսկոպոսներու յատուկ Միւնիստոսի խորհուրդին եւ Հայ Կաթողիկէ Միւնիստոսական

ՔԷՊԷՔԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Անցեալ շաբաթ (Սեպտեմբեր 4), Ֆրանսախօս Քէպէքը, Գանատայի տասը նահանգներուն տարածութեամբ ամենամեծը, ինքզինք La Belle Province կամ «Գեղեցիկ Նահանգ» կոչողը, ունեցաւ իր խորհրդարանական ընտրութիւնները:

Քանի մը ամիսներ առաջ համալսարանականներու կրթաթոշակին ինդըրայարոյց յաւելում առաջարկած Ազատականները (Liberal Party), որոնք տասը տարիներ ամբողջ իշխանութիւնը ստանձնած էին գլխաւորութեամբ վարչապետ Ժազ Շարէի, կորսնցուցին ընտրութիւնները: Ընդդիմադրութիւնը, որ կը բաղկանար երեք անջատողական Separatistes կամ Sovereignist կոչուող կուսակցութիւններէ (Parti Quebecois (PQ), Coalition Avenir Quebec (CAQ) եւ Quebec Solidaire (QS)), անմիաբան մասնակցեցաւ ընտրութիւններուն:

Ու թէեւ արդիւնքը եղաւ ի նպաստ ընդդիմադրութեան (PQ 55 աթոռ եւ ձայներու 32.02%, Liberal 49 աթոռ եւ 31.01%, CAQ 19 աթոռ եւ 27.16%, QS 2 աթոռ եւ 6.02%), սակայն իսկական յաղթանակը տարաւ Գանատան, որովհետեւ անջատողական ուժերը միանաբար հաւաքեցին ընտրական ցանկին վրայ եղող ձայներու ընդհանուր թիւին միայն քառասուն առ հարիւրը (40%):

Ու թէեւ Parti Quebecois-ն պիտի կազմէ Քէպէքի յաջորդ կառավարութիւնը, ան պիտի չհամարձակի իր փոքրամասնական կառավարութեամբ (Minority Government) յաջողցնել իր ծրագիրը՝ Քէպէքը Գանատայէն հեռացնել:

Նախապէս երկու առիթներով, 1980-ի եւ 1995-ի հանրաքուէներով կամ Referendum-ներով, Քէպէքի իշխանութիւնը ստանձնած Փարթի

Քէպէքուան ձայներու շատ փոքր տարբերութեամբ ձախողեցաւ Քէպէքը անջատել Գանատայէն:

Այսօր քէպէքցիներու տասէն եօթն կամ եօթամասուն առ հարիւրը (70%) չուզեր նման Referendum մը:

Այսուհանդերձ, յաղթանակի գիշերը, հազարաւոր համակիրներու առջեւ տուած իր ելոյթին մէջ, Փարթի Քէպէքուայի կուսակցապետ Փոլին Մարուս (Pauline Marois) չմոռցաւ յիշեցնել սրահէն ներս եղողներուն եւ դուրսէն հետեւող գանատացիներուն, թէ անջատումի նպատակը կայ ու կը մնայ, երբ ըսաւ՝ «Կուզենք երկիր մը, եւ պիտի ունենանք զայն», աւելցնելով՝ «Խօսքս կուղղեմ մեր դրացիներուն Գանատայի մէջ: Պէտք է հասկնաք, որ մենք որպէս ազգ կուզենք մեր սեփական որոշումները առնել այն բոլոր հարցերուն մէջ որոնք մեզ կը հետաքրքրեն: Ձեզ կը հրաւիրեմ ընդունիլ մեր ձգտումները լայնամտութեամբ»:

Եւ խօսքը ուղղելով սրահին մէջ յաղթանակի ցնծութեամբ գինովցած ներկաներուն, ըսաւ. «Ըսած էի, նորէն կըսեմ հիմա, եւ պիտի շարունակեմ ըսել, թէ կը հաւատամ որ Քէպէք պէտք է ինքնիշխան դառնայ»:

Առաջին կայծը ատելութեան տրուեցաւ իսուրիզանի մը կողմէ, որ Փոլին Մարուսի ելոյթի ընթացքին սրահէն ներս մտնելով, «Անգլ-իւախօսները ըմբոստացած են» պոռալով կրակեց ներկաներուն վրայ, սպաննելով մէկ հոգի, ձերբակալուելէն առաջ:

Փոլին Մարուսն պիտի ըլլայ Քէպէքի առաջին կին վարչապետը, դառնալով Գանատայի հինգերորդ նահանգային կին վարչապետը՝ Ալպէրթայի, Նունըվաթի, Պրիթիշ Գոլմպիայի եւ Նիւ Ֆրնչլանտի կին վարչապետներու կողքին:

Փարթի Քէպէքուայի նորակազմ կառավարութիւնը եթէ ընտրապայքարի ընթացքին կատարած իր խոստումները յարգէ, շատ մը փոփոխութիւններ պիտի մտցնէ Քէպէքի ընկերային կեանքին մէջ: Ֆրանսերէն լեզուի, մշակոյթի եւ նկարագրի ամրացման նկատմամբ նոր օրէնքներ եւ միջոցառումներ պիտի որդեգրուին, եւ առեւտրական ընկերութիւններէն պիտի պահանջուի Ֆրանսերէնով կատարել իրենց գործառնութիւնները եւ նուազագոյնով կատարել գանոնք անգլերէնով:

Կը մտածուի նաեւ օրէնք մը անցընել, որպէսզի արգիլուի պետական բնոյթ կրող պաշտօնեաներուն, որոնց մէջ նաեւ դպրոցի ուսուցիչները, գործի ներկայանալ կրօնական աւանդոյթ յատկանշող կերպարով, ինչպէս՝ իսլամական գլխու քող եւ փաթիթոց, կամ հրէական «քիւրա»: Յատկանշական է որ նման օրէնքի տակ պիտի բացառուին եւ արտօնուին կաթողիկէ հաւատքի հետ կապ ունեցող երեւոյթներն ու աւանդութիւնները, ինչպէս՝ իսաչ կրելու երեւոյթը, որովհետեւ, ըստ Փարթի Քէպէքուայի, այդ երեւոյթներն ու աւանդոյթները կարտացոլեն կամ կը խորհրդանշեն Քէպէքի հետ առնչուող պատմութիւնն ու մշակոյթը:

Պատմականօրէն, Քէպէք նահանգը հիմնուած էր 1763 թուականին, երբ Ֆրանսայի Պուրպօն թագաւորը Անգլիոյ փոխանցեց French Colony of Canada-ն եօթնամեայ պատերազմէ ետք (1756-1763), Treaty of Paris համաձայնագրով: Ապա, 1867 թուականին, Dominion of Canada անունով երկիրը հիմնուեցաւ Անգլիոյ հովանիին տակ, եւ Քէպէք եղաւ գլխաւոր մասնակից անոր կազմութեան մէջ:

Մտաւորապէս հարիւր տարի, Անգլիոյ հովանիին տակ, Քէպէք ապրեցաւ վայելելով իր անկաշկանգ

կաթողիկէ հաւատքը եւ ֆրանսական Civil Law օրէնքով կանոնաւորեց իր կեանքը: Սակայն ան կապրէր ազգային վիրաւոր արժանապատուութեամբ մը, որ բուժումի կը սպասէր:

Եւ պատահեցաւ որ 1963 թուականին Front de Liberation du Quebec-ը կազմուեցաւ եւ ասպետութիւններ կատարեց Քէպէքի անգլիախօսներուն (Anglophones) դէմ: Յետոյ, 1967-ի Յուլիս ամսուն, Ֆրանսայի նախագահ Ջորժպար Շարլ Ծը Կօլ, Քէպէք քաղաքին մէջ իր ինդըրայարոյց «Vive le Quebec Libre» կանչով, հրահրեց Քէպէքի ազգայնականները, որմէ ետք, 1968-ին, կազմուեցաւ Քէպէքի ինքնիշխանութիւն դաւանող կուսակցութիւնը՝ Փարթի Քէպէքուան (Parti Quebecois), Բընէ Լըվէքի գլխաւորութեամբ: Գանատան աշխարհի ամենէն յառաջադէմ երկիրներէն կը նկատուի՝ իր կեանքի բարձր մակարդակով եւ խաղաղ ու համերաշխ ապրելակերպով:

Անկասկած, օտար դիտողին անհասկնալի կը թուին Քէպէք-Գանատա բաժանումի մը դրդապատճառները:

Քէպէքի ազգային արժանապատուութիւնն որոնող Փէլիսթ-ազգայնականները մասամբ գոհացումի արժանացան, երբ ֆրանսերէնը անգլերէնի համագոր Գանատայի պետական լեզու նկատուեցաւ 1969 թուականին: Նաեւ՝ երբ Գանատայի կառավարութիւնը փորձեր կատարեց (1985-1995) Քէպէքը որպէս Distinct Society արձանագրելու իր բարեփոխելու սահմանադրութեան մէջ, եւ երբ քէպէքցիներուն տրուեցաւ Գանատայի մէջ յատուկ ազգ կոչուելու իրաւունքը Գանատայի փարլամենթին կողմէ՝ 2006 թուականին:

Բաժանումի սուրը գուցէ շարունակէ վտանգ ներկայացնել Գանատայի գլխուն, մինչեւ որ... Գանատան խզուի Անգլիոյ թագէն եւ վերջնականապէս բաժնուի Անգլիայէն, ու հանրապետութիւն դառնայ:



ՀԵՌԱՏԵՍ ԽԻՉԱԿԻ ՅԱՆՁՆԱՌՈՒ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY

Ճաշկերոյթ Պարահանդէս եւ Ազգային Երգերու Երեկոյ
 Նուիրուած Ս.Դ.Հ.Կ.ի 125 Ամեակին

DINNER DANCE & PATRIOTIC SONGS
 DEDICATED TO 125th ANNIVERSARY Of S.D.H.P.

Կազմակերպութեամբ՝ ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 PRESENTED BY GAYDZ YOUTH ORGANIZATION

Մասնակցութեամբ՝ Լոնտոնէն Սիրուած Երգիչ
 եւ ազգային երգերու մեկնաբան՝
Սամուէլ Վարդանեանի
 SPECIAL GUEST SINGER
 From London
SAMVEL VARDANIAN

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 22, 2012
SATURDAY SEPTEMBER 22, 2012
AT AMBROSIA BANQUET HALL
 6410 SAN FERNANDO RD. GLENDALE, CA 91201
Փամը 8:30 ԷՆ սկսեալ STARNING AT 8:30 P.M.
 Մուտքի ցուր՝ DONATION \$65.00
 FOR TICKETS & MORE INFORMATION
 CALL KARINE 818-324-0574 or GARINE 626-755-4773

ԶՐՈՅՑ ԼՈՆՏՈՆԱՐԱՅՈՒԹԵԱՆ ՅԱՅՏՆԻ ԴԵՄՔԵՐԵՆ՝ ԴՈԿՏ. ՓՐՈՑ. ՋՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՅԵՏ

Արձակուրդով Լիբանան գտնուելուն առիթով, լոնտոնահայ գաղութի վերաբերեալ գրույց մը ունեցանք նախկին լիբանանահայ եւ այժմ Յուլիս ամիսէն սկսեալ Անգլիոյ Օքսֆորտ համալսարանի Միջին Արեւելքի եւ հայագիտութեան նիւթերու դասախօս հրահրուած Հրաչ Զիլինկիրեանի հետ:



Արդարեւ, դոկտ. փրոֆ. Հրաչ Զիլինկիրեան Քէմպրիջի համալսարանէն ներս տասը տարիներ քաղաքատնտեսութեան ճիւղերու յատուկ ակադեմիական տարբեր պաշտօններ վարած է: Ազգային գետնի վրայ եւս կը բերէ իր մասնակցութիւնը՝ ըլլալով Լոնտոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ Խնամակալութեան նախագահ եւ Ծխական խորհուրդի ատենապետ: Որոնոյ եւ հետագօտող միտք որպէս՝ իր մասնագիտութեան վերաբերեալ յօդուածներով եւ ուսումնասիրութիւններով հանդէս եկած է ազգային եւ միջազգային մամուլի մէջ: 120 յօդուածներ ունի համացանցի վրայ (www.Hratch.info):

ղեկավարութեան համար անբացատրելի կը մնայ այն երեւոյթը, որ Հայաստանէն արտագաղթող հայերը չեն շարունակել տեղական հայ համայնքներուն հետ: Բնական է, որ իրենց մասնակցութիւնը իր դրական նպաստը կը բերէ, բայց իրենք կ'ուզեն իրենք իրենց մէջ ապրիլ: Ի՞նչ է թիւը այսօր Անգլիոյ եւ լոնտոնահայութեան:

Մեր առաջին հարցը կը վերաբերի լոնտոնահայ գաղութի հին գաղութ ըլլալու հանգամանքին, որ վերջին շրջանին քանակական աճ արձանագրեց: Որո՞նք էին պատճառները լոնտոնահայ գաղութի թիւի աճին:

Մինչեւ վիճակագրական տուեալներու յատկացումը 10-15 հազար կը գնահատուի հայութեան թիւը: Չափազանցուած թիւեր կը տրուին, որոնք իրականութեան չեն համապատասխաներ:

Հրաչ Զիլինկիրեան երեք հոսանքներու յառաջացումով բացատրեց ներկայ պատկերը: Անգլիական գաղութատիրութենէն ետքը Հնդկաստանէն, Կիպրոսէն եւ Աֆրիկեան որոշ երկիրներէ հայեր հաստատուեցան Անգլիա:

Գիտես ի՞նչ Դրաչ, մեզի համար գերագոյն նպատակ է հայը հայ պահել: Այս մեկնակետով ալ ազգային, եկեղեցական, կրթական եւ մշակութային ինչ աշխատանքներ կը տարուին:

Այս երկիրներէն հաստատուող հայերու անգլիական քաղաքացիութիւն ունենալու առաւելութիւնն էր, որ դիւրութիւններ ընծայեց: Երկրորդ հոսանքը կու գար Միջին Արեւելքէն՝ Սուրիա, Իրան, Լիբանան եւ Իրաք: Միջին Արեւելքէն այս գաղթը Հրաչ Զիլինկիրեան վերագրեց անկայունութեան եւ անապահովութեան քաղաքական պայմաններուն, զարգացնելով այն միտքը թէ՛ հայ գաղթավայրերու ճակատագիրը կապուած է իրենց ապրած երկիրներու ապրած ճակատագրին: Հրաչ Զիլինկիրեանի կարծիքով արտագաղթ բառին գործածութիւնը իր իսկական առումով կ'առնչուի Հայաստանէն դուրս եկող հայերու պարագային: Յաւալի իրողութիւնը այն է, որ Լոնտոն հաստատուող հայերու երրորդ հոսանքը կը կազմեն Հայաստանէն արտագաղթած հայերը: Անկախութենէն ասդին Հայաստանէն արտագաղթը կը շարունակուի: Գաղութի

Աւանդական մեր կառուցներէն, կ'ըսէ, Հրաչ Զիլինկիրեան, հայց. եկեղեցին կը մնայ հիմնականը, ուր համախմբուած հայութիւնը եւ անոր շուրջ ծաւալած գործունէութիւնը կը ծառայեն հայապահպանութեան: Անգլիոյ մէջ կան հետեւեալ եկեղեցիները, Լոնտոն Ս. Սարգիս եկեղեցի, Մանչեսթըր Ս. Եղիշէ (Անգլիոյ ամենահին եկեղեցին է): Այս տարի Կիւլպէնկեան հաստատութեան կողմէ կառուցուած Ս. Սարգիս եկեղեցւոյ հիմնադրութեան 90-ամեակն է: Այս առիթով ծրագրուած է կազմակերպել եկեղեցական, մշակութային եւ ընկերային բնոյթի ձեռնարկներ, Սեպտեմբեր 2012-էն Յունուար 2013 երկարող ամիսներուն:

Թուելու համար հիմնականները՝ քոլոքիումի բաժնին մէջ Գերշ. Վահան Եպս. Յովհաննէսեանի, առաջնորդ անգլիահայոց, «Աստուածաշունչը եւ Հայց. եկեղեցին» խորագրով գեկոյցը, Հրաչ Զիլինկիրեանի «Հաւատքի Ակունք»

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԻԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՏՄԱՍԲ



ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՊԱՐԳԵՒ ՏԱՐԱԳՃԵԱՆ

Անկասկած մեզմէ շատեր կը հետեւին Սուրիոյ մէջ տակաւ շարունակուող ու մտահոգիչ դարձած քաղաքական տագնապին: Կասկած չկայ, նաեւ, որ հոն ապրող մեր հայրենակիցները կը կրեն ուղղակի կամ անուղղակի հետեւանքները ստեղծուած անապահով կացութեան: Ինչ որ կը սպառնայ մեր այդ պատմական գաղութին բարօրութեան՝ չըսելու համար գոյութեան: Արդարեւ՝ Սուրիան դարձած էր երկրորդ հայրենիք մը՝ թրքական ջարդերէ ճողոպրած մեր ազգակիցներուն համար: Հաստատած ենք հոն եկեղեցիներ, դպրոցներ եւ ազգային հաստատութիւններ որոնք ապահոված են մեր ցեղին մնացորդացին ոչ միայն տնտեսական, հապա նաեւ իմացական ու մշակութային իրաւ վերելք՝ եւ յառաջդիմութիւն: Անկասկած հայ ազգը շատ պարտական է ասպնջական արաբ ժողովուրդին եւ սուրիական երկրորդ հայրենիքին:

Ամերիկահայ գաղութին մէջ փոքր թիւ մը չեն կազմեր այսպէս կոչուած սուրիահայերը որոնք այժմ մտահոգուած են իրենց նախկին գաղթօճախին - յատկապէս Հալէպի մէջ տիրող անապահով կացութիւնով: Տակաւին մեծ թիւ մը կը կազմեն վաղուց հոն՝ այսինքն Սուրիա հաստատուած մեր ազգակիցները, ինչպէս նաեւ անոնց սպասարկող մեր ազգային, եկեղեցական, կրթական հաստատութիւններն ու գործօնները: Ու քաջայերական ըլլալ չեն թուիր մեզի հասնող լուրերը, յատկապէս անոնց տնտեսական կացութեան շուրջ:

Հետեւաբար, ինչպէս որ նախորդ սերունդի պատկանող ամերիկահայերը օգնութեան հասան Մեծ Զարդէն մագապուրծ ազատուած եւ Սուրիա ապաստանած հայ գաղթականներուն, նոյնպէս ալ մեզի, հին կամ նոր ամերիկահայերուս կողմէ ազգային ու մարդասիրական պարտականութիւն համարուելու է օգնութեան ձեռք երկարել Սուրիոյ մեր եղբայրներուն եւ քոյրերուն: Այս նպատակով է որ վերջերս կազմուեցաւ միջ-համայնքային Սուրիահայ Օգնութեան Յանձնախումբ մը որ փութով ձեռնարկէ համազգային տարածքով հանգանակութեան:

Արդ սիրելի հայրենակիցներ, այս սրտաբուխ կոչով կը դիմենք ձեր ազգասիրական ու մարդասիրական խղճին եւ գիտակցութեան՝ որպէսզի նիւթական օգնութեան ձեր բաժինը բերէք օրհասական կացութեան մատնուած սուրիահայ մեր եղբայրներուն եւ քոյրերուն:

Ները եւ Հայց. եկեղեցին» նիւթը:

Ծրագրուած են նաեւ բանաստեղծներ՝ Վահան Տէրեանի եւ Պարոյր Սեւակի նուիրուած երեկոներ: Երաժշտական համոյթներ՝ Չուլթակահար Անի Պաթիքեանի եւ մէջո Անայիս Հէշոյեանի կողմէ, ինչպէս նաեւ Չուլթակահար Լեւոն Զիլինկիրեանի եւ թաւջութակահար Ալեքսանտր Շօշեանի կողմէ: Նիւ Եորքէն բանաստեղծուհի Լօլա Գունտաքճեանի կողմէ իր բանաստեղծութիւններուն ընթերցումով: Ընդգրկուած է ծննդեան երգերու հաւաքական երգեցողութիւնը: Վերջապահութեան տեղի պիտի ունենայ Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան նուիրուած մասնաւոր եկեղեցական արարողութիւն եւ ապա աւանդական մատաղի օրհնութիւն եւ բաշխում եկեղեցւոյ շրջափակին

մէջ:

Բացի եկեղեցիէն կը գործեն նաեւ միութիւններ, որոնց մէջ կարելի է յիշել ՀԲԸՄը, Համազգայինը, Նոր Սերունդը, Անահիտը, Հայաշէնը եւ Հայ Հիմնարկը: Յիշուած միութիւնները իրենց տարեկան ձեռնարկներով ազգային հաւաքական ճիգին իրենց նպաստը կը բերեն:

Հրաչ Զիլինկիրեան իր գրույցի ընթացքին յատուկ կերպով շեշտը դրաւ Վահան Եպիսկոպոս Յովհաննէսեանի գործունէութեան աշխուժութեան վրայ: Ան իր ջանքերով եկեղեցական եւ ազգային նոր ղեկավարութիւն յառաջացուց, որ իր հովանաւորութեամբ եւ քաջայերանքով կը գործէ: Սերտ գոր-

Շարք էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աձիրաճեղօր է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Ս. Դ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ (ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ)



ՏՈՒՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԷՃԵԱՆ

Հայ ֆետայական շարժման ամենէն արդիւնաւէտ եւ ամենէն ժողովրդական դէմքերէն է Մինաս Օղլու:

Մինաս Օղլու ծնած է Չարշամպայի Գաբու-Գայա գիւղը: Չարշամպան, իսառն բնակչութեամբ՝ թիւրք, քիւրտ, հայ, աւազար, չէրքէզ, յոյն, լազ՝ գաւառ մըն էր, ուր ազգամիջեան հակառակութիւններուն կողքին կը գործէին նաեւ աւազակաբարոյ խումբեր: Նշանաւոր կը դառնան Մէվլէտի եւ Շիրին Ալիի աւազակախումբերը: Այս աւազակախումբերը կը յարձակին նաեւ Գաբու-Գայայի վրայ: Մինաս Օղլու, իր հետ ունենալով իր եղբայրները՝ Մինասն ու Պողոսը եւ մայրը՝ գիւղացի երիտասարդներով, կը կազմակերպեն գիւղին ինքնապաշտպանութիւնը (1):

Երբ այս երեւոյթը կը կրկնուի, շրջակայ գիւղերէն պատուիրակութիւն մը՝ հայ, թիւրք, յոյն եւ ալյըն կը դիմէ Մինաս Օղլուին, որ ստանձնէ նաեւ շրջակայ գիւղերուն պաշտպանութիւնը: Գաւառապետը եւս այս ծրագրին իր համամտութիւնը կու տայ: Մինաս Օղլու կը կազմէ պատժիչ խումբ մը եւ պետական միջոցներով գինուելով կը հալածէ աւազակախումբերը: Խումբին կազմութեանէն երեք ամիս ետք, Գըրճ Արմուտ թրքական գիւղին մէջ, երբ Շիրին Ալիի խումբը իր հերթական աւարտութիւնը կը կատարէր, Մինաս Օղլուի խումբը աննշմար կը մօտենայ գիւղին ու կը պաշարէ աւազակախումբը: Տասը ժամ տեսած կռիւի միջոցին Շիրին Ալին եւ երկու աւազակներ կը սպաննուին: Շիրին Ալիի եղբայրը՝ Մօլլա Սուլէյման կը ձերբակալուի, իսկ միւսները փախուստ կու տան: Աւազակախումբը կը ցրուի:

Այս դէպքէն քանի մը շաբաթ ետք ֆետրուարեան ցուրտ օր մը, Մինաս Օղլու Մէվլէտի խումբը կը պաշարէ Օրթա գիւղի մօտ գտնուող բարձր լեռան մը քարանձաւներուն մէջ: Կռիւր կը տեւէ աւելի քան մէկ օր: Մէվլէտն եւ չորս աւազակներ կը սպաննուին եւ խումբը կը ցրուի:

Մինաս Օղլուի անունը կը սատնայ մեծ հռչակ:

Ժողովուրդը վախնալով որ աւազակախումբերը կրնան վերակազմուիլ, կը խնդրէ Մինաս Օղլուէն որ ան ոստիկանի պաշտօն ստանձնէ: Մ. Օղլու կ'ընդառաջէ ու որպէս հեծեալ ոստիկանապետ, շուրջ երկու տարի կը հսկէ շրջանի խաղաղութեան:

1892ին շրջան կը հասնի Նշան ծածկանունով առաջին հնչակեան քարոզիչը, որ իր շուրջ կը համախմբէ հայրենասէր եւ մարտունակ երիտասարդութիւնը: Կը կազմուի շրջանի հնչակեան վարչութիւնը Նշան Պէյլինեանի գլխաւորութեամբ: Երիտասարդութեան մարտական պատրաստութիւնը բարձրացնելու եւ ֆետայական խումբեր կազմելու համար, վարչութիւնը կը մտածէ յեղափոխական շարժման մասնակցելու հրահրել Մինասեան եղբայրները: Բայց սա շատ նուրբ հարց մըն էր, որովհետեւ Մինասեանները մտած էին պետութեան ծառայութեան



մէջ: Առաջարկը կ'ըլլայ զգուշաւոր ձեւով եւ ուրախութիւն բոլորին, Մինասեանները «անձնուրբար պատրաստակամ եղան մեր գաղափարը ընդունելու, մինչեւ իսկ ունեցած զէնքերը չուզեցին վերադարձնելու կառավարութեան: Բայց, ո՛չ, պէտք էր որ զէնքերը յանձնէին եւ յանձնելով զէնքերը վերադարձան գիւղ» (2): Մինաս Օղլու եւս այդ մասին կը յուշագրէ. «Ես ու եղբայրներս, ամենայն սիրով եւ պատրաստակամութեամբ այդ առաջարկն ընդունեցինք, երբ ունեցինք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը մեր ժողովուրդի ազատութեան գործին տալ» (3):

Փառատօնի այս ծաւալուն միջոցառումի իրագործման համար իրենց գործնական աջակցութեամբ սատար հանդիսացան նաեւ ՄԴՀԿ-ի յարակից կառույցները, որոնք նոյնպէս արժանի են յատուկ գնահատականի:

Երկրոյեան ուշ ժամերուն ներկաները բաժնուեցան պուրակէն, իրենց հետ տանելով խանդավառ եւ յիշատակելի օրուան մը լաւագոյն տպաւորութիւնները:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

«Քաջ Նազար» երգիծա-քննադատական հանդէսի 40-ամեակի յոբելեանական բացառիկ հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Սեպտեմբեր 30, 2012թ., երեկոյեան ժամը 6-ին, Glendale High School-ի հանդիսարանի մէջ: Ելոյթ են ունենալու գաղութի լաւագոյն երգիչ-երգչուհիներ, պարախումբեր և թատերախմբեր:

Մուտքը անվճար և ազատ է, միայն ՀՐԱՆԻՐԱՏՈՄՍՈՎ: Բոլոր աթոռները համարակալուած են:

«Քաջ Նազար»-ի խմբագրութիւնը և «Քաջ Նազար» հեռուստաժամի կիրակնօրեայ հաղորդաշարի խօսնակ Յովհաննէս Բալայեանը, սիրով հրաւիրում է Ձեզ ներկայ լինելու 40-ամեակի բացառիկ հանդիսութեանը: Բարի վայելում, իմ թանկագին հիւրեր:

Անվճար հրաւիրատուներ ունենալու համար դիմել՝

- «Երեւան» տպարան, 702-B E. Colorado St., Glendale (818) 246-2070
- Glendale West դեղատուն (818) 548-5157
- Գրատուն Պերճ (818) 244-3830
- Սարդարաբադ Գրատուն (818) 5000790
- Գրատուն Ապրիլ (818) 243-4112
- Unique Market (Chatrian) (818) 247-2633
- Parseghian Photo Hollywood (323) 664-3365
- Black Jack Supper Market N. Hollywood (818) 759-7818
- Ani Grocery, Glendale (818) 241-7229
- Raffi Market, Bubrank (818) 729-9391
- Foothill Food Mart, Tujunga (818) 951-7100
- Shtrak Grocery, Foothill Blvd. (818) 352-7787

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏՂԱՔ ՊԱՅՈՂՆԵՐ ԹԱՂԱՊԵՏԻՆ ՅԱՆՁՆԵՑԻՔ

«Այգրըր Տողրուլար» Հայացուց՝ Գրիգոր Կեօֆեան

Շիրին ծնաւ եւ մեծցաւ Գերմանիոյ մէջ եւ կը կարծէր, որ ինք աղջիկն է ատրեամանցի քիւրտ հաճը Իպրահիմին: 12 տարեկանին պատահամբ իմացաւ, որ հայրն ու մայրը իսկութեամբ հայ էին, եւ թէ՛ իրենք կը ճանչցուէին իբրեւ «մերինները»: Շատ նեղուեցաւ, մագերը ձերմկեցան: Շիրինին մոռացումի տրուած ինքնութիւնն ու փշրուած անհատականութիւնը, իր անձնական եւ մշակութային ինքնութեան փնտրտուքի պատմութիւնը մեզ կը փոխադրեն Քէօյնէն Ատրեաման եւ իննսուն տարուան հեռուորութենէ մը մեզ կը քշեն դէպի մեր օրերը՝ ծանօթացնելու համար «մերիններուն» հետ:

«Մերինները» 1915-ի աղէտէն փրկուելէ ետք բռնի կերպով իսլամացած, երեւութապէս իսլամ, բայց իսկութեան մէջ իբրեւ քրիստոնեայ ապրող հայեր են Անատոլիոյ մէջ: Բռնութեան տակ պահուած եւ ինքնութիւնը ուրացուած այս հաւաքականութենէն շատեր գերբնական ջանքերով կրցեր են իրենք գիրենք զարգացնել՝ աշխատասիրութեամբ, ստեղծագործ ոգիով, արհեստներու եւ արուեստի մէջ ունեցած իրենց հմտութեամբ յաջողեր են վերապրելու իրաւունք ստեղծել ընկերութեան մէջ: Անոնք կը նմանին մեծ հրդեհի մը մոխիրներուն մէջ բուսող վարդաթուփերու եւ կամ այն հակա ծառերուն, որոնք իրենց համար ապրելու տեղ կը ստեղծեն ժայռերու կողին:

Գիրքը, որուն անունը փոխ անունած է թրքերէն «Սարը կելին», իսկ հայերէն «Սարի աղջիկ» երգէն, կը պատմէ ատրեամանցի «մերիններուն» իսկական կեանքէն տեսարաններ եւ մարդկային վիճակներ: «Պահ դրուած օփիտ» եւ «Սիրտս քեզմով կը խայտայ» գիրքերու հեղինակ Քեմալ Եալչընի այս գիրքը առաջին անգամ հրատարակուած է 2004-ին, Գերմանիա:

Ստորեւ գիրքէն կարգ մը հատուածներ՝ պատմուած Շիրինին մօր բերնով...

«Եթէ հայ ենք ըսենք, հայ չենք. իսլամ ենք ըսենք, իսլամ չենք: Մենք, ահա, այս ճակատագրին մարդիկն ենք: Մոռացութեան տուեր են մեր լեզուն. քիւրտերուն մէջ ապրելով՝ քրտացեր ենք: Քրտերէնը դարձեր է մեր մայր լեզուն. խօսածնիս քրտերէն, իսկութիւննիս՝ տարբեր: Թրքերէն կը խօսինք, թուրք չենք: Թուրքերը մեզ քիւրտ կը կոչեն, մենք զմեզ քիւրտ չենք ճանչնար: Բայց մենք գիրար լաւ կը ճանչնանք... Մենք մեզ կը կոչենք «Մերինները»: Մենք ծագումով, իսկական արմատներով հայ ենք. մեր լեզուն քրտերէն, մեր կրօնքը իսլամն է... Առանց ուզելու՝ որքա՞ն կարելի է իսլամ ըլլալ, ահա ա՛յդքան իսլամ ենք:

Ես եօթը տարեկանիս իմացայ, որ հայ եմ:

Նախակրթարանը ամէն առտու երդում կ'ընէինք՝ ըսելով, որ «Թուրք եմ, ուղղամիտ եմ, աշխատասէր եմ»: Մեր տան մէջ քրտերէն կը խօսուէր, ինքզինքս քիւրտ ճանչցած էի: Դպրոց սկսելուս՝ յայտնուեցաւ, որ թուրք եմ. տան մէջ քիւրտ, դպրոցը թուրք, եւ յանկարծ օր մըն ալ սորվեցայ, որ արմատներով հայ եմ:

Դրացիին աղջկան՝ Ֆաթիմային հետ կը խաղայինք միասնաբար: Օր մը մեր տան առջեւի մըրջիւնները սկսանք մեռցնել: «Եկու՛ր՝ սա կար-

միր մըրջիւնները մեռցնենք, անոնք կեաւուր են. սեւերուն չղպնանք, անոնք իսլամ են», ըսաւ Ֆաթիման:

Առաջին անգամ կ'իմանայի, որ մըրջիւնները բաժնուած կ'ըլլան կեաւուրներու եւ իսլամներու. շատ զարմացած էի:

«Ի՞նչ ըսել է կեաւուր», հարցուցի:

«Է, չէ՞ որ դուք ալ կեաւուր էք. կարմիրները ձեր, իսկ սեւերը մե՛ր մըրջիւններն են. իսլամ մըրջիւնները պիտի մեռցնեն կեաւուրները»:

Չէի հասկցած, բայց սիրտս նեղուած էր: Չուզեցի մեռցնել մըրջիւնները. խաղը ձգելով՝ հեռացայ Ֆաթիմային քովէն՝ առանց բառ մը ըսելու:

Շիրինին Պատրաստած Գերեզմանը:

Արձակուրդի համար Ատրեաման գացած էին. Շիրին տակաւին նախակրթարան չէր սկսած: Գիշերուան ընթրիքին համար սազ մը մորթեցին, իրմէ գաղտնի. հագիւ ճաշէն ետք լուր ունեցաւ: Եթէ գիտնար, չէր արտօներ, որ մորթուի, մորթուելու պարագային ալ միսը չէր ուտեր:

Յաջորդ առտու, երբ կը խաղար բակին մէջ, սագին կտրուած գլուխը տեսաւ. մօրը քով երթալով՝

- Մայրի՛կ, գերեզման մը շինենք սագին գլխուն համար. ըսաւ: Մայրը՝ Սուլթան հանըմ, թէ՛

- Գնա՛, աղջիկս, հիմա գործ ունիմ. դուն ուզած տեղը փորէ, ուզածիդ պէս թաղէ, ուզած ձեռովդ գերեզման շինէ, ըսելով՝ կը հեռացնէ Շիրինը:

Բաւական ետք Շիրին կը վերադառնայ:

- Մայրի՛կ, եկուր եւ նայէ, ես սագը թաղեցի եւ գերեզման մը շինեցի:

Տան մէջ գտնուողները կը ինդան.

- Երթանք՝ տեսնենք Շիրինին շինած գերեզմանը. - կ'ըսեն: Շիրին գերեզման մը շինած, գլուխն ալ տախտակէ խաչ մը տնկած էր. դիտողները կը ինդային բաւարարուած:

- Զագուկը իր արմատները գիտէ եղեր, արմատները:

- Փա՛նք, հագա՛ր փառք, որ Շիրին իր ինքնութիւնը գիտէ:

- Մարդուն արիւնը կը քաշէ դէպի իր արմատները. նայեցէք՝ Շիրինին արիւնն ալ քաշեր է դէպի իր արմատները:

- Մաշալլա՛հ, հագա՛ր անգամ մաշալլահ, արիւնը քաշեր է դէպի իր արմատները:

Մինչդեռ Շիրին շատ ալ չէր հասկցած բոլորին ուրախութեան պատճառը՝ խաչ տնկելուն համար:

Իրականութեան մէջ Շիրին Գերմանիոյ մէջ իսլամներու գերեզման մը երբեք չէր տեսած: Իր տեսածը պարզապէս դպրոցի ճամբուն վրայ գտնուող գերեզմանոցին մէջ գտնուող խաչերն էին: Բաւական ժամանակ անցընելէ ետք հագիւ պիտի հասկնար, որ ինչո՛ւ խաչ տնկելու դէպքը այսքան ուրախացուցած էր «մերինները»: Առանց անդրադառնալու՝ Շիրին իրականացուցած էր Ատրեամանցի «մերիններուն» ներքին տենչանքը:

Շիրինին Մօրեղբօր Յուրարկաւորութիւնը

Երբ Շիրինին մօրեղբայրը մեռաւ, հօրեղբայրներն ու ազգականները խոր մտածումի մատուցեցան. յուրարկաւորութիւնը ինչպէ՞ս կատարէին: Եթէ իսլամական օրէնքներուն հետեւէին, իմամը դիակը լուալու ընթացքին պիտի նկատէր, որ

թրիատուած չէր եւ, ուրեմն, տարիներով պահուած գաղտնիքը պիտի բացայայտուէր: Հինէն ի վեր «էլ-համուլիլլահ միւլիլլաման ենք» ըսող «մերիններուն» իսկութեան մէջ քրիստոնեայ ըլլալը պիտի տարածէր բոլորին:

Դիակը սենեակին միջտեղը պատկած էր:

Ո՛չ, դրացիները պէտք չէր գիտնային իրենց իսկութիւնը, իրենց իսկական հաւատքը: Իրականութիւնները դառն էին, սակայն մեռնողին հետ կարելի չէր մեռնիլ: Մնացողները պիտի շարունակէին ապրիլ Ատրեամանի իսլամներուն մէջ. դժուար եղաւ լուծուած բանաձեւել...

Դիակը, գիշերուան մութին, գաղտնօրէն պիտի տարուէր եւ գերեզմանոցին մէկ անկիւնը պիտի թաղուէր...

Այս պարտականութիւնը իրականացուցին մօտիկ ազգականներէն հինգ տղամարդ:

Պարեգօտի Տակ Վիգերուն խաչ կրողներ:

«Մերիններէն» կարգ մը ազգականներ սկսեր էին օրական հինգ անգամ նամագ կատարել: Ատրեամանի մէջ այս նամագին պատճառը անոնց վախն ու անապահովութիւնն էր:

- Ի՞նչ ընէինք, սիրելի՛ս: Քրիստոնէութենէն ո՞ր մէկ քրիստոնէութիւնը մնաց: Յիսուս Քրիստոսի հանդէպ մեր յարգանքն ու հաւատքը անասնման է: Սակայն մեր պաշտամունքը կատարելու եւ կամ ծնած մանուկը մկրտելու եկեղեցի մը չձգեցին: Նոյնիսկ հիմերը քանդելով՝ բնաջնջեցին: Անցեալը ինչեցնող հետք մը նոյնիսկ չեն ձգած: Ատրեամանի մէջ մէկ հատ ասորիներու եկեղեցի մը մնաց. փորձէ երթալ, եթէ կրնաս. յաջողօր օրը գլխուդ չեկածը չի մնար: Նամագ կը կատարենք, ծոմ կը պա-

հենք. Ատուած կը տեսնէ եւ զիտէ մեր մէջն ու դուրսը. ի՞նչ ընենք:

«Մերիններ»-էն կարգ մը կիներ սկսած էին սեւ պարեգօտով ծածկուիլ: Երբ հարցուցած էր պատճառը, պատասխանած էին. «Ի՞նչ կրնանք ընել, Շիրին, տաճիկներուն աչքը մեր վրան է»:

Իսկ կարգ մը կիներ պարեգօտերուն տակէն խաչ կը կախէին իրենց վիզերուն. կ'աշխատէին քրիստոնէական իրենց աւանդութիւնը կենդանի պահել առանց ոեւէ մէկուն ցոյց տալու. ամէն զատկուան, օրինակ, հաւկիթները կը ներկուէին:

Ատրեամանցի Հոփիսիմէն կը Պատմէ Մօրը Պատմութիւնը:

Մայրս երեք տարեկան է եղեր տարագրութեան ժամանակ, քիւրտ մը մօտենալով՝ կարաւանին մէջէն կ'առնէ մայրս, եւ կը տանի Պեպեք կոչուող քրտական գիւղ մը, ուր եօթը տարի կը պահէ իր ընտանիքին մէջ: Մօրս մայրը մնացեալ հայերուն հետ կը տարագրուի: Որոշ ժամանակ ետք, երբ խաղաղութիւն կը տիրէ, ողջ մնացողները կը վերադառնան Ատրեաման:

Մէկ կողմէ կ'աշխատէին պատուապարան մը եւ օրապահիկ ճարելու, միւս կողմէ՝ կ'աշխատէին գտնելու տարագրութեան ճանապարհին ասորանոր ձեռքը ինկած իրենց հարազատները՝ աղջիկը, եղբայրը, կիներ, զաւակը կամ հարսը: Մօրս հօրաքոյրը անվերջ հարցումներով եւ փնտրտուքներով կ'իմանայ, որ եօթը տարի առաջ քիւրտի մը կողմէ առնուած մայրս կը գտնուի Պեպեք կոչուած քրտական գիւղը: Անմիջապէս այդ գիւղը կ'երթայ եւ հարցնելով՝ կը գտնէ մօրս ապրած տունը:


Մեծ հօրաքոյրս կը պահանջէ, որ վերադարձնեն մայրս, սակայն եօթը

Շաք.ը էջ 16

Khachadour Baghoumian

Book Signing

"Hyeri Zankvadzayin Godoradzneruh"



Sunday, October 7, 2012

After the church ceremony

St. Gregory Armenian Apostolic Church

Geragos Hall
2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107

.....

Refreshments will be served

~ FREE ADMISSION ~

ԻՐԱՅԱՏՈՒԿ ՆԻՐՆՊԵՐԿ...

Շարունակում էք 13-էն

դու երեւակալութեան չունեցած դա-
ժան միջոցներով:

**Հեղինակները հիմնականում իւ-
րապատուկ ձեւով են մտնում իրենց
խակ հիմնադրած «դատարան»-ի
վերջնական վճռին, թողնելով այն
ընթերցողին...**

«Տարբեր վկաների՝ գոհերի,
նախապահորդների, լրագրողների,
դիւանագետների, բուրբ պաշտօն-
եաների նկարագրութիւնների հա-
մադրումն ի վերջոյ գրեթէ ոչ մի
կասկած չի թողնում, որ երիտօր-
բերի կառավարութիւնը նպատակ է
ունեցել մայր հողից արմատախիլ
անել հայերին: Վերջի վերջոյ, կայ մի
փաստարկ, որ անհնար է ժխտել՝ դա
հենց իր՝ **Թալեսֆ փաշայի ոչ թէ
վիճահարոյց հետազոտող**, այլ Կոնս-
տանդնուպոլսում պաշտօնավարող
դիւանագետների հետ ունեցած հան-
դիպման ժամանակ անընդհատ
հնչող խոստովանութիւնն է, ընդ
որում նրա գրուցակիցները պատա-
հական երկրների ներկայացուցիչ-
ներ չէին, մէկը չէր գոհ պետութեան՝
Միացեալ Նահանգների, միւսը՝
կայսրութեան գլխաւոր դաշնակցի՝
Գերմանիայի դեսպանն էր: Ինչո՞ւ է
Թալեսֆ փաշան այնքան բացայայտ
խօսում նրանց հետ. ըստ երևոյթի
հաւատում է, որ նման հօգոր դաշ-
նակցի օգնութեամբ անպայման
իրենց յաղթանակով կ'աւարտուի
պատերազմը, իսկ յետոյ ոչ ոք չի
բացի հայկական թղթածրարները:
Յաղթողից հաշիւ չեն պահանջում:
Ինչ վերաբերում է հայերին, նրանք
Բրեճնուսի «Կորչե՛ն յաղթողները»
կոչի նոր գոհերը կը լինեն: Այսինքն
Օսմանեան կառավարութեան ներ-
քին գործերի նախարարը հաստատ
համոզուած է եղել, որ այդ բնազն-
ջումը, որքան էլ ծանր լինի, կայս-
րութեան ... թրեւցման նախապայ-
մանն է, ապագայ բարգաւաճման
կարեւորագոյն հիմքը» (էջ 92-93):

**Չորրորդ գլխի «Ուշացած շար-
ժում՝ պատճառները» վերնագրի
«Վերականգնուած յիշողութիւն» են-
թավերնագրի տակ հեղինակները
հիմնաւոր փաստեր են բերում, թէ
շարժումն ինչո՞ւ է այդքան ուշացել.
«...Իժարխտաբար, առաջին աշխար-
համարտն իր Նիւրնբերգը չունեցաւ,
որպէսզի դատեր պատերազմի յան-
ցագործներին: Այդ ժամանակ հա-
ղորդակցութիւնը, նաեւ մամուլի,
լրատուական տարբեր միջոցների
կապը շատ թոյլ էր: Հայերը, ինչպէս
հրեաները երկրորդ աշխարհամար-
տից յետոյ, չունէին հօգոր, ազդեցիկ
սփիւռք, որ տարածեր իրենց ցեղի
բնազնջմանն առնչուող բոլոր փաս-
տաթղթերը: Սրան աւելացնենք այն,
որ առաջին հայտարարումները նախ
ձգտում էին յարմարել նոր կեան-
քին, յաղթահարել բռնագաղթուածի
համար անխուսափելի բազում
դժուարութիւններ: Շատ-շատերի,
հասկանալի է, առաջնահերթ խնդի-
րը դարձաւ ասպնջական երկրում**

աշխատանքի տանիք գտնելը: Գաղ-
թականների վիճակը իսկապէս
ծանր էր՝ յանախիմից-վեց ընտանիք
ապրում էին նոյն սենեակում: Մի
կերպ տեղաւորուելուց յետոյ, Ֆրան-
սայում, շատ այլ երկրներում պէտք
էր արագ լեզու սովորել, մեծերի հա-
մար աշխատանք, երեխաների հա-
մար դպրոց գտնել: ...

Որքան էլ տարօրինակ թուայ,
իրենց պապերի ու ծնողների վե-
րապրելու, նոր կեանք սկսելու ան-
կոտրում կամքի շնորհիւ է, որ նոր
սերունդը, դժգոհելով հանդերձ
նախնիների վաթսուհինգ տարուայ
թմրիթից, հնարաւորութիւն ունե-
ցաւ վերաբարձել անցեալի անար-
դարութիւնները: Առանց սփիւռքի
գոյութեան, թրեւական պետութեան
դէմ պայքարելն իմաստ չէր ունենայ:
Աւելին, եթէ սփիւռքը ձուլուած կամ
ազգային գոյութիւնը դաղարեցրած
լինէր, հայկական պահանջատիրու-
թիւնն անհիմն կը դառնար:

Հայ երիտասարդները գէնք են
վերցրել հենց այն բանի համար, որ
վերականգնեն իրենց ժողովրդի
իրաւունքները, մարդկութեան յիշ-
դութիւնը» (էջ 173-174):

**Հեղինակների խորհուրդը հայ
ժողովրդին.** «... Փաստօրէն իրենց
ծայրահեղութեամբ որոշ կազմա-
կերպութիւններ, մի շարք պատճառ-
ներով, որ մեկնեցոյց տուեցին, փոր-
ձում են վարկաբեկել տաս տարուայ
պայքարը: Պետք է հասնել այն բանին,
որ ազգերը խօսեն հայկական հար-
ցի մասին, բայց ոչ թէ միջոցների
առջեւ խտրութիւն չդնելու գնով:
Արդե՞օ՞ք ահաբեկչութիւնն այդքան
անհրաժեշտ է դատի արժարժման
համար: Ճիշտ է, բռնութիւնը լրատ-
ուական միջոցների դրոները շարդե-
լով բացելու ձեւ է, բայց չէ՞ որ հայ
համայնքը հարուստ է, կարող է այլ
նախապահներով բացել այդ նոյն
դրոները: Ուշադրութիւն դարձրէ՛ք
հրէական ցեղասպանութեանը
նուիրուած շարժանկարների թուի,
ձայնասփիւռքի եւ հեռուստատեսու-
թեան հաղորդումների, գրքերի, մա-
մուլի, յոդուածների վրայ, որոնք
անընդհատ արթուն են պահում հան-
րութեան խիղճը: Որտե՞ղ են հայերի
գրած, արտադրած կամ նկարահա-
նած շարժանկարները, հաղորդում-
ները, գրքերն ու յոդուածները: Ի՞նչ
են արել նրանք, ի՞նչ են անում իրենց
դատը մոռացնել չտալու համար:
Եթէ, ինչպէս մեզ կասկած յայտնե-
ցինք, հայ մարտիկներն արիւն են
թափում միայն համայնքի ներքին մի-
ասնութիւնն ամրապնդելու համար,
նման գիւնուած պայքարը դժուար է
պաշտպանել:

Միևնուրեւ հայկական պահան-
ջատիրութիւնը մերն է, բոլորինս՝
հայ լինենք, թէ ոչ: Այն նախագոյն շա-
կան խիստ կարեւոր իմաստ ունի եւ
վկայում է, որ մեր օրերում մոլորիսկ,
չնայած լրատուական միջոցների
ներդրած ահռելի ջանքերին, կարելի
է անտեսել մի ողջ ժողովրդի կոտո-
րած:

Ահա թէ ինչու բոլոր առումնե-
րով էլ վտանգաւոր ու դատապար-
տելի կը լինի, եթէ անպատասխա-
նատու մի բռնացի մամն արդարա-
ցի պայքարը շնորհի իր ուղուց, որով-
հետեւ այն մեզ ահագանգում է՝ իւ-
րաբանչիւր ցեղային, կրօնական, ազ-
գային կամ ընկերային փոքրամաս-
նութիւն ցանկացած պահի կարող է
դառնալ բռնապետական որեւէ իշ-
խանութեան փմահանոյթի առարկայ,
մի՛շտ պէտք է յիշել անցեալի դասերն
ու զգօն լինել:

Յիշողութիւնը կորցրած աշ-
խարհը կորած աշխարհ է...» (էջ 231):

**Հիմնականում համամիտ լինե-
լով հանդերձ հեղինակների հետ
վերոյիշեալ հարցերում, նկատենք
նաեւ, որ հայկական սփիւռքը ունե-
նալով որոշակի հարատուութիւն, տքնա-
ջան աշխատանք է տանում խաղաղ
պայմաններում իրականացնելու Հա-
յերի ցեղասպանութեան ճանաչումը
բոլոր երկրներին, այդ թւում Թուրք-
իայի կողմից եւ հատուցում պահան-
ջել նրանից, բայց նա բախում է
տուեալ երկրի քաղաքական շահերի
հետ եւ փողն էլ չի օգնում այդ
պարագայում: Այսպէս, յաճախ Ամե-
րիկայում հայերի համար նոյնիսկ
փողով չի բացւում լրատուական
միջոցների դռները, քանի որ ար-
ծարձուող հարցերը խանգարում են
Ամերիկայի քաղաքական շահերին,
որը պայմանաւորուած է նրա ու
Թուրքիայի, «ինտիմ» հարաբերու-
թիւններով, որոշ դէպքերում էլ՝
նաեւ նրա եւ Իսրայէլի յարաբերու-
թիւններով: Մի օրինակն էլ բաւա-
կան է այդ ապացուցելու համար.
Ամերիկայում քանի անգամ է փորձ
կատարուել Ֆրանց վերֆելի «Մուս-
սա լեռան 40 օրերը» գրքի հիման
վրայ ֆիլմ նկարահանել, եւ միշտ
արգելք է դրուել Սպիտակ Տան
կողմից...:**

**Նշենք, որ ամենահօգոր հրէա-
կան համայնքը Ամերիկայում է: Այն
ուճի բազմաթիւ պաշտօնեաներ Սպի-
տակ Տանը եւ այլ գերատեսչութիւն-
ներում ամբողջ Ամերիկայով մէկ,
հսկայական հարստութիւն եւ ան-
սահման արտօնութիւն, որը վե-**

րահակողութեան չի ենթարկուած
պետութեան կողմից, ընդհակառա-
կը, ինքն է ղեկավարում Ամերիկան:
Հրէաները իրենց ձեռքն են պահում
Ամերիկայի համարեա բոլոր բնա-
գաւառները՝ լրատուական միջոց-
ները, հեռուստատեսութեան կենտ-
րոնները, շարժանկարի աշխարհը՝
հրեայ դերասաններով արտադրելով
իրենց ազգութիւնը քարոզող շար-
ժանկարներ եւ անհրաժեշտութեան
դէպքում նոյնիսկ խանգարում են
հայերին, երբ իրենց շահերը պա-
հանջում է այդ, այսինքն, նրանք
աշխատում են հրէական հողքօտը
չնսնմացնել՝ խանգարելով Հայերի
ցեղասպանութեան առաջնային դիր-
քերում լինելուն:

Հայկական հարցը քննարկե-
լիս, հեղինակներն ամենայն մանրա-
մասնութեամբ ուսումնասիրել են
հարցի բոլոր կողմերը, գրքում նշե-
լով հայ բնակչութեան թիւը 1980-
ականներին, հայկական կազմակեր-
պութիւնների իրականացրած բոլոր
գործողութիւնները՝ դրական-բացա-
սական կողմերով եւ հոգեբանական
առումով, Թուրք-հայկական յարա-
բերութիւններն ու հայերի կոտո-
րածները՝ Հայերի ցեղասպանութեան
նախորդ տասնամեակներում եւ
իրենց «Նիւրնպերգի դատարա-
նում» անաւարկելիօրէն ապացուցել
են, որ Օսմանեան Թուրքիայում
երիտթուրքերը 1915 թ. հայերի
նկատմամբ կազմակերպուած ու
ծրագրուած ցեղասպանութիւն են
իրագործել:

Շնորհակալութիւն գրքի հեղի-
նակներին, որ արժէքաւոր ու կարե-
ւոր գիրք են գրել հայերի դատը
պաշտպանելու համար միջազգային
ասպարէզում եւ անաչառ դատախա-
զի դեռ են ստանձնել գրքում:

Որպէսզի ընթերցողը լրիւ պատ-
կերացնի, թէ ինչ է ներկայացնում
գիրքը իրենից, այն պէտք էր ամբող-
ջութեամբ ներկայացուէր տուեալ
յօդուածում, որն անհնարին է, ուս-
տի նկատի ունենալով գրքի կարե-
ւորութիւնը, ցանկալի կը լինէր, որ
հայ մամուլը գիրքը պարբերաբար
սպազդեր իր էջերում:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏՂԱՔ ՊԱՅՈՂՆԵՐ

Շարունակում էք 15-էն

տարի է ի վեր մայրս պահած գիւղա-
ցին չի տար գալն. «Եօթը տարի
կերցուցի, խմցուցի, մեծցուցի, չեմ տար,
ես անիկա տղուն պիտի առնեմ», կ'ըսէ:
Հօրաքոյրս, թէ՛ «Եօթը տարուան
ընթացքին ծախսած գումարը վճարեմ,
բայց դուն վերադարձուր եղբօրս աղ-

ջիկը»: Գիւղացին կտրականապէս կը
մերժէ վերադարձնել մայրս եւ տունէն
կը վճռուէ հօրաքոյրս:

Կ'անցնի ժամանակ, եւ օր մըն ալ
գիւղերուն մէջ պտտող մունետիկ մը
պտուալով կը դառնայ. «Լսեցինք,
չլսեցինք մի՛ ըսէք. ով որ տունը հայ
տղաք, քրիստոնեայ տղաք ունի, թող
յանձնէ թաղապետին»:

**ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ
ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
92-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Կիրակի, Հոկտեմբեր 14, 2012
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք.
Եկեղեցւոյ մէջ
2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107

Հերոսամարտի նահատակներուն յիշատակը
յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԻՂ

Լոս Անճելոսի Հաննոյ Հայրենակցական Միութիւնը ներկայիս
կ'ընդունի կրթաբոշակի դիմումներ՝ հօրենական կամ
մօրենական կողմէ հանրակրթական ուսանողներու, որոնք կը
հետեւին համալսարանական ուսումներու՝ Հարաւայիի Գալիֆորնիոյ
մէջ:
Նկատի առնուելու պայմաններն են՝ բեկնածուն պէտք է
ներկայացնէ անձնական իրավիճակը, փակ պահարանով,
նախորդ տարուան վիճակագրոյց եւ կրթաբոշակի դիմումը:
Հեռախօս՝ (626) 351-0695:

ՅՈՎՅԱՆՆԵՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Շարունակում է 7-էն

տալիսներուն դրկուած գինամթերքը: Հայ ֆետալիները անակնկալ յարձակումով մը գրաւուած գէնքը ետ կը վերցնեն: Այլ առիթով մը Գայագճի Օղլու Ալիի եւ եղբոր Արիֆի կողմէ գլխաւորուած ոստիկանական խումբ մը կը պաշարէ Մինաս Օղլուի խումբը Քապա ձէւիզ գիւղին մէջ: Կռուին որպէս արդիւնք ոստիկանապետ եղբայրները ու շատ մը ոստիկաններ կը սպաննուին: Այլ պարագայի մը Մ. Օղլու 5 ընկերներով կը պաշարուի Քուրչուկու գիւղին մէջ: Մէկ օր տեւող փոխհրաձգութենէն ետք, հայ ֆետալիները կը յաջողին կտրել համիտիչէ գունդին պաշարման օղակը, հասնիլ մօտակայ անտառը եւ միանալ Յակոբ Խանքէրեանի խումբին, տալով միացն մէկ նահատակ՝ Սարգիս Ալթըզուլանճեանը:

Մինաս Օղլուի կողմէ դեկավարուած խումբերուն բախումները կառավարական գորքերուն եւ աւագակախումբերուն հետ կը շարունակուին մինչեւ 1896 Պարուն, երբ Սուլթան Համիտի կողմէ կը յայտարարուի ընդհանուր ներում: Խառն պատուիրակութիւն մը, կազմուած իշխանութեան ներկայացուցիչներէն, Սամսոնի հնչակեան վարչութենէն եւ երեւելի անձնաւորութիւններէ կը դիմէ Մ. Օղլուին, որ օգտուի ընդհանուր ներումէն եւ գէնքերը ցած դնէ: Մինաս Օղլու երեք օրուան ժամանակ կը նահանջէ, որուն միջոցին ան խորհրդակցութիւններ կ'ունենայ խումբերուն եւ Փոքր Հայքի մասնաճիւղերու վարչութիւններուն հետ: Ընդհանուր եզրակացութիւնը կ'ըլլայ օգտուիլ ներման հրամանագրէն: Մ. Օղլու կը լուծարէ խումբերը, կուտոնները կը դրկէ ապահով վայրերու ինք, հինգ գինակիցներով, ամբողջապէս գինուած կը ներկայանայ Սամսոնի նահանգապետին: Մինաս Օղլուին չեն գինաթափեր: Ան կը վերադառնայ իր գիւղը եւ կը լծուի խաղաղ աշխատանքի: Անոր տունը կը վերածուի շահագործումներու գոհ դարձած գիւղացիներու բողոքատեղիի մը, որոնց դատեր ան կը լուծէ ամենայն արդարամտութեամբ:

1897ին Մինաս Օղլու կը մեկնի Եգիպտոս: Իր հուշակը իրմէ առաջ արդէն հասած էր Աղեքսանդրիա, ուր մէկէ աւելի կեղծ Մինաս Օղլուներ կը շարաշահէին ժողովուրդին անգաւորական զգացումները: Երուանդ Օտեան, հետեւեալ ձեւով կը ներկայացնէ այդ իրավիճակը. «Յետոյ ունեցանք նաեւ մէկ քանի կեղծ Մինաս Օղլուներ, այն քաջարի հրոսապետը որ այնքան շահատակութիւններ (իմա՝ ասպատակութիւններ Ե.ձ.) գործածէ Սամսոնի եւ Սեբաստիայի միջեւ եւ հայկական կեանքեր փրկած՝ ահ ու սարսափ ազդելով վայրագ աւագակներու: Միջոց մը նոյնիսկ երկու Մինաս Օղլուներ ունեցանք Աղեքսանդրիոյ մէջ, ուրիշ մէկ քանի կեղծ Մինաս Օղլուներէ ետք: Երկուքն ալ իրենց հարազատութեան վրայ կը պնդէին ու փոխադարձաբար գիրար կ'ամբաստանէին իբր խաբեբայ: Որո՞ւ հաւատալ. «գո՞րն առնել եւ զորն թողուլ»: Շատեր երկուքն ալ կը մերժէին իբրեւ անվաւեր բայց ուրիշներ, երկու խումբի բաժնուած, իր Հաճի Մինաս Օղլուի

հարազատութեան վրայ կը պնդէր. այս հակամարտ կիրքերէն բնականաբար կ'օգտուէին երկու խաչագողները, որոնք ամէն տեսակ օգնութիւն կը գտնէին իրենց մոլեռանդ կուսակիցներուն կողմէ: Այդ միջոցին սակայն վրայ հասաւ բո՛ւն իսկ հարազատ Հաճի Մինաս Օղլուն, յանձնարարագրով, պաշտօնական վաւերաթղթերով եւ վերջ դրաւ կատակերգութեան մը, որ ալ միօրինակ դառնալ կը սկսէր: Բուն Մինաս Օղլուն, որուն հետ ծանօթանալու հաճոյքը ունեցայ, երկայնահասակ, նիհար, կորով դիմագիծերով, համեստ ու պատուական անձ մըն էր: Հակառակ կեղծերուն՝ որոնք իրենց երեւակայական քաջագործութիւնները կը պատմէին առտուրնէ մինչեւ իրիկուն, սրճարաններուն անկիւնը, Մինաս Օղլու երբեք չէր սիրեր իր ըրածներու մասին խօսիլ, հակառակ գինքը խօսեցնելու համար ըրած մեր ջանքերուն: Ճշմարիտ հերոսի մը պէս, այդ մարդը գրեթէ խօսիլ չէր գիտեր եւ կարծես արհամարհանք մը ունէր խօսքին հանդէպ: Նաեւ չափազանց վեհանձն էր: Բաւական Աղեքսանդրիա մնաց առանց իր նիւթական վիճակին վրայ տեղեկութիւնը տալու եւ մենք ամէնքս այնպէս կը կարծէինք թէ ապրուստի միջոցներ ունէր: Յետոյ դիպուածով լսեցինք թէ մարդը անթի է եղեր գրեթէ ու այն ատեն յիշեցինք թէ ո՛չ ոք, օր մը ճաշարանի մէջ անոր կերակուր ուտելը տեսած էր: Եկեղեցիէն ուղեցին իրեն նիւթական օգնութիւն մը ընել, մերժեց: «Եթէ գործ մը գտնաք՝ կ'աշխատիմ», ըսած էր: Յետոյ, Հայկէֆենտի էֆիզլէրի Գահիրի մօտերը ունեցած մէկ ագարակին պահապան կարգուեցաւ ու ինչ գնաց՝ ուր բաւական ժամանակ մնաց կարծեմ»(7):

Եգիպտոսի մթնոլորտը հեղձուցիչ կու գայ Մինաս Օղլուին ու ան կ'որոշէ վերադառնալ իր լեռներն ու ձորերը: Սակայն, Սամսոնի նահանգապետին մէջ, անոր թոյլ չեն տար մտնել թուրքիա եւ ան կը վերադառնայ Եգիպտոս: Կարճ ժամանակ մը անց, 1903ին, կը տեղափոխուի Պաթմա եւ ապա կը հաստատուի Սոխումի:

Այդ շրջանին, Սեւ Ծովու ափերը ապաստանած էին 1895ի համիտեան ջարդերէն փախստական շուրջ 2500 հայութիւն: Տատառ պէկ անունով աւագակապետը, իր աւարառութիւններով դարձած էր հայ գաղթականութեան պատուհասը: Աւագակապետը զայլու ուռուսական կառավարութեան քանի մը փորձեր կ'անցնէին անյաջող: Մինաս Օղլուի անցեալի փորձին ծանօթ ժողովրդային պատուիրակութիւն մը, կը դիմէ անոր որպէսզի զսպէ աւագակները: Մինաս Օղլու կ'ընդառնէ: Կը կազմէ քսան հոգինոց պատիժ խումբ: Առաջին իսկ բախումին Տատառ պէկ կը սպաննուի եւ աւագակախումբը կը ցրուի:

1905ի Ռուսական Ա. Յեղափոխութեան Մ. Օղլու իր խումբով կ'անցնի յեղափոխականներուն կողմը: 1906-1907 յեղաշրջութեան տարիներուն, Մ. Օղլու բախումներ կ'ունենայ «սեւ հարիւրակայիններու» հետ: Այդ ժամանակարշջանին է որ կառավարութիւնը կ'որոշէ հայ գաղթականութիւնը վերադարձնել թուրքիա: Սա կը նշանակէր Սուլթան Համիտի ողորմածութեան յանձնել անպաշտպան գաղ-

թականները: Ժողովուրդը կ'ընդդիմանայ: Այս հարցով ժողովուրդին վրայ բռնութիւններ գործադրող պաշտօնեաներուն դէմ պատիժ գործողութիւններ կատարելու համար Մ. Օղլու վերստին կը կազմէ խումբեր եւ կ'ապաստանի մօտակայ լեռները: Անոր հարուածներուն տակ մէկը միւսին ետեւէն կ'իջնան շատ մը ցարական պաշտօնեաներ: Քոզաքական գործախումբեր կը հալածեն Մինաս Օղլուն: Կռիւներէն մէկուն ընթացքին Մ. Օղլու, իր հին գինակից Յակոբ Ուրումեանի խումբին հետ, կը յաջողի երկու կրակի տակ առնել քոզաքական գործախումբը, որ ամբողջական ոչնչացումէ խուսափելու համար ամօթահար փախուստ կու տայ: Այս կռիւին, Մ. Օղլու վեհանձնաբար գերի չի վերցնէր քոզաք հրամանատարը: Այս ծիրէն ներս, 1907 Փետրուարին Սոխումիի Հնչակեան մասնաճիւղի որոշումով ահաբեկչութեան կ'ենթարկուին Ազանուրա գիւղի գիւղապետ յոյն Արիսիւեն ու անոր թիկնապահները:

Օսմանեան սահմանադրութենէն ետք Մինաս Օղլու կը վերադառնայ իր ծննդավայրը: Ան կ'արժանանայ ժողովրդային ջերմ ընդունելութեան եւ յարգանքի:

1912-1913ին, Ստեփան Սապահ Գիւլեան հակաթիթիհատական քարոզչութեան եւ կազմակերպչական աշխատանքներու համար կ'այցելէ Փոքր Հայքի շրջանները: «Չարշամպայում, բախտն ունեցայ անձամբ տեսնելու Յովհաննէս Մինասեանին, (հնչակաոր Մինաս Օղլու) եւ ընկեր Հաճի Կարապետ Մանուկեանին: Դասական այդ հերոսները, դեռ իրենց կորովը պահել էին, միշտ աննկուն մնալով, հակառակ իրենց գիտով անցած հազարաւոր փորձանքներին»(8): Մ. Սապահ Գուլեանի հրապարակախօսութիւններուն եւ կազմակերպչական աշխատանքներուն շնորհիւ շրջանի մասնաճիւղերը կ'ընդլայնին նորագիր երիտասարդ ընկերներով: Մինաս Օղլու, երիտասարդ ընկերներուն հետ կը կատարէ գինավարժութիւններ եւ փորձառու հայրուկապետի իր փորձը կը փոխանցէ անոնց:

Մինաս Օղլու 1914 Ապրիլին գոհ կ'երթայ դարանակալ գնդակներու: Անոր սպանութեան անդրադարձող կարգ մը հեղինակներ, այդ գործին համար կասկածի տակ կ'առնեն հայեր, ու կը յիշատակեն թոփճեան ընտանիքն հետ Մ. Օղլուի ունեցած հակառակութիւնները: Բացառուած չէ որ Մինաս Օղլու գոհ գացած ըլլայ Իթիթիհատի դարանակալ գնդակներուն, որովհետեւ Իթիթիհատ այդ շրջանին հայ հասարակական կուսակցական յատնի դէմքեր գաղտնագողի սպաննելէ ետք, կը փորձէր ոճիրը վերադրել ներհայկական կամ միջկուսակցական տարակարծութիւններու:

Մինաս Օղլուի սպանութեամբ անոր մարտական ոգին չի մեռնիր. այդ կը փոխանցուի իր տասնութամեայ որդիին՝ Նշանին: 1915ին Նշան կը վերցնէ իր հօր ժառանգ թողած գէնքը ու խումբ մը գաղափարակից երիտասարդներով կը բարձրանայ լեռ: Նշան կը քալէ իր հօր ոտնահետքերով: Ասլան անունով հրամանատարը, իր գործախումբով ի գոլը կը որձէ ընկնել հայ փախստականները: Անոնց թիւը կը շատնայ փախստական նորանոր երիտասարդներով, որոնք մինչեւ համաշխարհային պատերազմի աւար-

տը, յաջող ձեւով կը դիմակայեն բոլոր յարձակումները: Պատերազմին աւարտն ալ խաղաղ ելք մը չըլլար փախստական երիտասարդներուն համար: Նշանի գլխաւորութեամբ անոնք կը ստիպուին կուռիլ քեմալական յորդաններուն դէմ մինչեւ 1923, երբ Մուսթաֆա Քեմալի հրահանգով փախստականներուն ճամբայ կը տրուի որ անցնին ռուսական սահմանը: Նշան իր գինակիցներով կը հաստատուի Սոխումի, ուր կ'անցնէ կեանքին մնացեալ օրերը:

Մինաս Օղլուի բարի յիշատակը երկար կը մնայ շրջանի հայ, թուրք, յոյն եւ այլազգի գիւղացութեան մօտ: Օրինակի համար երբ 1915ին կառավարութիւնը կը փորձէ համոզել Գաբու Գայա գիւղի բնակիչ Քէսկէն Օսման Չաուշի գաւակները, որպէսզի միանան Նշան Մինասեանը հետապնդելու արշաւին, անոնց մայրը արգելք կը կենայ ըսելով. «Տղա՛քս, եթէ դուք Մինասեանին տղուն վրայ գնդակ նետէք, տուածս կաթը ձեզի հարամ կ'ընեն: Մինասեանը եղած է անցեալի մջ ձեր հայրը պաշտպանողը Շիրին Ալիէն եւ ուրիշ թշնամիներէ. եւ դուք այսօր անոր տղա՞ն կ'ուզէք սպաննել» (9): Այս օրինակ վկայութիւն մը կը կատարէ նաեւ Սեբաստացի Մուրատ, երբ 1915ին Սեբաստիայէն իր առասպելական փախուստի ճամբուն վրայ կ'իջեանի յունական գիւղեր, ուր յոյն գիւղացիներուն կողմէ կ'արժանանայ սիրալիր ընդունելութեան: Գ. գիւղի յոյն գիւղացիները կը պատմեն թէ ինչպէս 1895ի կոտորածներուն Մինաս Օղլու պայքարած էր կառավարութեան դէմ, «սարսափեցուցած էր շրջակայի բոլոր աւագակները եւ որուն քաջագործութիւններու վրայ թուրքերն անգամ հիացումով կը խօսէին» (10):

Յոյն գիւղացիները Մ. Մուրատին կը տեղեկացնեն նաեւ որ Մ. Օղլուի տղան այժմ փախստական է եւ իրենք մեծ յոյսեր ունին անոր վրայ:

Երբ մէկ կողմէ թուրք, յոյն եւ այլազգի գիւղացիները յարգանք կ'արտայայտեն ժողովուրդի ցատումը մարմնաւորող քաջ ֆետալիին յիշատակին, անդին, պահպանողական մտածելակերպի դասական ներկայացուցիչներէն Արշակ Ալպոյանեան, Մինաս Օղլուի գործունէութիւնը կ'որակէ «յիմար շարժումներ»... (11):

Ծանօթագրութիւն
 1. Ստեփան Սապահ Գիւլեան, «Փոքր Հայքի Յիշատակներ», Պէյրութ, 1956, քերթոս «Արարատ» թիւ 21, էջ 243:
 2. «Յուշարձան Նուիրուած Ա.Դ.Հ.Կ. Բաղասմամբակի», հրատ. ՄԴՀ Գրաստայի շրջանի, Փարիզ, 1930, Նշան Պէյլեան «Հնչակեան Յայտնի Գրաստայի Մինաս Օղլու»:
 3. Ս. Սապահ Գիւլեան, ... էջ 247:
 4. Նոյն, էջ 249:
 5. Նոյն, էջ 251:
 6. Նոյն, էջ 259:
 7. Երուանդ Օտեան, «12 Տարի Պոլսէն Դուրս», Պէյրութ, 1937, մատենաշար «Ջարթոն» թիւ, էջ 140-141:
 8. Ս. Սապահ Գիւլեան, ... էջ 240:
 9. «Քաղոսմամբակ...», էջ 232:
 10. Չապլէ Եսայեան, «Մուրատի Ճամբորդութիւնը», Երեւան 1990, էջ 76-77:
 11. Ա. Ալպոյանեան, «Պատմութիւն Երկրի շայն», Գահիրէ, 1952, էջ 1182:

ՀԱԶԱՐ ՈՂՋՈՅՆ, ՓԱՌՔ ՈՒ ՊԱՏԻ ՔԵՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ,

Շարունակում է 1-ին

րը բնդհանրապես արտայայտու-
թիւն կը գտնեն մեր հայրենի հիւ-
պատոսարաններու կողմէ նախա-
ձեռնուած նշանակալից միջոցա-
նումներով, ժողովրդական մա-
կարդակի վրայ՝ ազգային քաղա-
քական կազմակերպութիւններու եւ
այլ կառոյցներու կողմէ կազմա-
կերպուած ոգեւորիչ հանդիսու-
թիւններով՝ դաշտագնացային փա-
ռատօն, ներակումբային եւ հրա-
պարակային գօտեպնդիչ ձեռ-
նարկներով:

Ամէն կողմ տօն է, տօնախմբ-
ութիւն, խանդավառութիւն, ազ-
գային հպարտութիւն ներշնչող
մթնոլորտ:

Մահացու պայմաններու ներ-
քայ ֆիզիկական գոյութիւնը քաղա-
քական, մահուան նիւթներէն փիւ-
նիկի նման հրաշափառ, միշտ
յարութիւն առած, օտարի ուժի
տակ յաւիտ տրոբուող հայրենիքի
պահած եւ վերջապէս, դարեր ամ-
բողջ անկարելի անկախութիւն
երագել է ետք, մահը մերժող հայ
ժողովուրդը, հրաշքի համագոր-
կենդանութիւն պահելով, կուգար
արդարօրէն տօնախմբելու իր հայ-
րենիքի անկախութիւնը, որ պիտի
երկնուէր թուականէս 21 տարին ներ-
ստաց:

Պարզ՝ կա՞յ արդեօք երկրա-
գունտի վրայ ապրող մէկ հայ
մարդ, որուն հոգին չի խայտայ, չի
ներշնչուի, չի հրնուի, չի գօտեպնդ-
ուի, չի գօրանայ, չի մաստաւորուի
ի տես՝ առկայ, ապրող, ազգերու
համաստեղութեան մէջ իր պատ-
ուանդանը գրաւած անկախ հայ-
րենիք ունեցած ըլլալու շոշափելի
իրականութեան, անոր արձանագ-
րած յաջողութիւններուն, կառու-
ցողական նախաձեռնութիւննե-
րուն ու իր ժողովուրդին ապագան
երաշխարհող նուիրագործումնե-
րուն: Կը հաւատանք որ չի կայ՝
բայց կայ՝ այդ խայտանքը, ներշն-
չումը, հրնուանքը, գօտեպնդումը,
գօրացումը եւ իմաստաւորումը
մնայուն աւիշի վերածելու միջոց-
ներու հրամայականը, Անկախու-
թեան տօնական օրերուն յաջոր-
դող մեր ազգային ու հայրենական
նգնաժամերով բեռնաւորուած
առօրեայ կեանքէն ներս:

Ներքին նախարարի վրայ՝ 1991
ին, ի լոյս աշխարհ բնծայուած Ան-
կախութեան Հռչակագիրը, հակա-
ռակ իր մէջ ամրագրուած ժո-
ղովրդավարական, սահմանադրա-
կան, արդարադատական ոգեշն-
չող, շինիչ ու կառուցողական
յանձնառութիւններուն՝ այսօրուան
դրութեամբ, 21 տարին ներս, տա-
կալին կը մնայ թուրքի վրայ: Հռչակ-
ագրի կիրարկման առանցքային
նշանակութեան կապակցութեամբ
հայրենի իշխանութիւններուն ցու-
ցաբերուած յօժարակամ անփու-
թութիւնը, պատճառ կը դառնայ
ազգային միասնական ուժի ջլատ-
ման, ներ-հայրենական պատակ-
տիչ, անհաշուետու, կեղեքիչ կա-

ռոյցներու յառաջացման, որոնք յու-
սահատութեան կը մատնեն արդէն
իսկ տնտեսապէս անելի մատն-
ուած մեր հայրենի ազգայնակա-
թեան ինքնատու տոկոսը, որ իր
մէջ ցնցիչ արտահոսք կը բանայ
դէպի օտար երկրակամարներ: Հա-
յաստան Աշխարհի Անկախութեան
21-րդ տարեդարձի պատգամն է մեր
հայրենի իշխանութիւններուն՝ տէր-
կանգնիլ Անկախութեան Հռչակագ-
րով իրենց ստանձնած հայրենա-
կառոյց սրբազան յանձնառութիւն-
ներուն, յանուն հայ ժողովուրդին
ու հայրենիքին:

Արտաքին մակարդակի վրայ
հայ ժողովուրդն ու Հայաստան Աշ-
խարհ, կը դիմագրաւեն նգնաժա-
մային տագնապներ, որոնք ժխտա-
պէս կ'անդրադառնան իրենց ազ-
գային ճգնաժամներուն նուիրագործ-
ման ընթացքին վրայ: Անոնք, ինչ-
պէս միշտ կուգան կրկին անգամ
հաստատելու հայրենակառուութեան
առանձնութիւնը՝ աշխարհի
մեծաշնորհեալ հոյիւն մէջ, ուր
անոնց պետական շահերն են, որոնք
կ'իշխեն իրենց արդարադատ գոր-
ծարկներուն վրայ: Այդ իրողութեան
բացայայտ ցնցիչ ապացոյցը
հրամցուեցաւ աշխարհի մեծամեծ-
ներու կողմէ: Անոնք դոյզն ազնուու-
թիւնը չունեցան պատասխանա-
տուութեան կանչելու Հունգարի-
ան՝ որ ցեղասպան Ատրպէյնանին
փոխանցեց՝ իր դասընկեր հայ
սպայ Մարգարեանը բունին մէջ
կացինահար սպաննող ցկեանս
բանտարկութեան դատապարտ-
ուած ազգերի մարդասպան Սաֆա-
րովը, որ իրքեւ հերոս՝ ընդունուե-
ցաւ ազգերի նախագահ Ալիեւի կող-
մէ: Երեւոյք՝ որ կը թարգմանուի
հայագրի դէմ կատարուած Ցեղաս-
պանութեան շարունակութիւնը:
Ցեղասպան Ատրպէյնանն անգամ
չի կանչուեցաւ պատասխանա-
տուութեան: Եթէ այս կրաւորա-
կան քաղաքական կեցուածքները
մեծամեծներուն՝ քաղաքական չէ,
հապա ինչպէ՞ս որակել, եթէ ոչ՝
Ցեղասպանութեան քաղաքակր-
թեամբ: Հայաստանի հանրապե-
տութեան Անկախութեան 21-րդ
տարեդարձը երկրորդ պատգամն
է մեր հայրենի վարիչներուն պարզ
ու մէկին ապաւինիլ իր ուժերուն,
իր ազգային կառոյցներուն զար-
գացման, հաւաքան ուժին եւ պե-
տութիւն ու ժողովուրդ անկախե-
լի միասնութեան, 21 Սեպտեմբեր
1991 ին որդեգրուած, անկախու-
թեան հանրաձայն Հռչակագրի
կառուցողական, ժողովրդավար
սկզբունքներու համաձայն, ինչ որ
իր տարբերակը չունեցող պետա-
կանօրէն գօրանալու միակ երաշ-
խիքն է:

Այս ակնկալութեամբ կ'ողջու-
նենք մեր հայրենի Անկախութեան
21-րդ տարեդարձը: Կրկին անգամ
բարձրաձայն կը գոչենք. Հազար ող-
ջոյն, փառք ու պատիւ բեզ հայ ժո-
ղովուրդ, Հայաստանի Անկախու-
թեան Տարեդարձային տօնի առի-
թով:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱԼԻԵՎԻ ՍԱՖԱՐՈՎԵԱՆ «ՆՈՒԷՐԸ»

Շարունակում է 2-ին

նակելու ստանձնած պարտաւո-
րութիւնը բացայայտօրէն խախտե-
լով, Ալիեւի վարչակարգն ապացու-
ցեց, որ չի կարելի հաւատալ անգամ
պետական մակարդակով իրենց
արուած խոստումներին ու հաւաստ-
իացումներին: Բնականաբար, այս
տեսանկիւնից որքան էլ մարդկայ-
նօրէն անընդունելի լինի, զուտ քա-
ղաքական հաշուարկների տեսանկ-
իւնից Սաֆարովի ազատութեան մէջ
յամաւօրէն երկար մնալն օգնում է
այս հարցում միջազգային հան-
րութեան մօտ այդ համոզմունքը
ձեւաւորելուն:

Երկրորդ պատճառն աւելի
պարզ ու հասկանալի է. միջազգային
հանրութիւնը առաւել քան ուժեղ
եւ անընդհատ ազդակներ պէտք է
ստանայ առ այն, որ ուղղակի անհ-
նար է մարդկանց կեանքն ու անմ-
տանգութիւնը թողնել միայն էլ թնիկ
պատկանելութեան համար կացնով
մարդ սպանողներին ու նրանց ար-
դարացնող-հերոսացնողներին: Սա-
կայն սա պէտք է դնել ոչ թէ
Ատրպէյնանի դէմ տեղեկատուական
ու քարոզչական պատերազմի հիմ-
քում, այլ հենց միջազգային հան-
րութեան, կոնկրետ երկրների, կոնկ-
րետ կազմակերպութիւնների հետ
քարոզչական ու դիւանագիտական
աշխատանքի հիմքում:

Պէտք է հաստնացնել, միջազ-
գային կազմակերպութիւններին,
երկրներին հասցնել այն գաղափարը,
որ Ալիեւի անկախութիւնը չճանաչելու,
Ատրպէյնանի տարածքային ամբող-
ջականութեան առաջնայնութիւն
տալու պարագայում միջազգային
հանրութիւնն ինքն է պատասխանա-
տու դառնալու դարաբարդիների եւ
հայերի կեանքի համար:

Սա չի նշանակում, թէ Հայաս-
տանը պէտք է դնի ԵԱՀԿ Մինսկի
խմբի շրջանակներում ընթացող բա-
նակցային գործընթացը շարունակե-
լու նպատակահարմարութեան, կամ
էլ հենց այս պահին բանակցութիւն-
ների հիմքում բացառապէս Ալիեւի
ներկայիս կարգավիճակը ճանաչելու
հարցը: Այս պահին նման քայլի
դիմելը նոյնիսկ չափազանց վտան-
գաւոր արկածախնդրութիւն կը լի-
նէր եւ հաւասար Ատրպէյնանի կող-
մից մեզ տրուած սաֆարովեան խա-
ղաթուղթը հենց այնպէս վստահելուն:

Այս դէպքից յետոյ արդէն բա-
նակցութիւնների ներկայիս սառեց-
ուածութիւնը սկսում է առաւելա-
պէս բխել հայկական կողմի շահերից
այն պարզ պատճառով, որ բանակ-
ցութիւնները կամ աւելի ճիշդ դրանց
բացակայութիւնը սկսում է ձառա-
յել ոչ միայն առկայ ստատուս-
քուոյի պահպանմանը, այլեւ հաս-
տատմանը՝ որպէս պատերազմից խու-
սափելու լաւագոյն միջոց:

Խնդիրն այն է, որ բանակցութ-
իւնների այս վիճակը նշանակում է,
որ Մինսկի խումբը, չունի կողմերին
ուղղուած այսպէս կոչուած հաշտեց-
ման նոր առաջարկութիւններ կամ
գաղափարներ եւ տրամադրուել է
բացառապէս մէկ հարց լուծելուն.
Թոյլ չտալ պատերազմի վերսկսում,
ինչն այլ կերպ նշանակում է ներկայ
ստատուս-քուոյի պահպանում: Կա-
մայ թէ ակամայ, ԵԱՀԿ Միւն-
խեյնի ակամայ, ԵԱՀԿ Միւն-
խեյնի ակամայ ստատուս-քուոն
պահպանելու երաշխավորի, իսկ մի-
ջազգային հանրութիւնը՝ ի դէմս
Թէկուզ Եւրախորհրդարանի այս վեր-
ջին, սաֆարովեան բանաձեւի, ար-
դարացնում ու խրախուսում է Մի-
նի նման նպատակազդումը:

Հայաստանի դիւանագիտութիւ-
նը, թերեւս, չի սխալուած բանակ-
ցութիւններից դուրս չգալու մասին
յստակ ու պաշտօնական դիրքորո-
շում յայտնելիս: Մերոնց սխալն այն
է, որ առաջ չեն քաշում Ալիեւի
չութեան անվտանգութեան առաւե-
լագոյն երաշխիքներ պահանջելու
թէպէր եւ դրանով չեն փորձում չէզո-
քացնել տարածքները նախապէս վե-
րադարձելու ատրպէյնանական նա-
խապայմանները, որոնք նաեւ ընկած
են մարդիկեան հիմնարար սկզբունք-
ների հիմքում:

Դրա լաւագոյն միջոցը հենց
այս փուլում բանակցութիւններում
Ալիեւի պարտադիր ներգրաւման
պայմանի առաջադրումն է: Սա ոչ
թէ բանակցութիւնների ձեւաչափի
փոփոխութիւն է նշանակում, ինչ-
պէս փորձ կարուի ներկայացնել, այլ
դեռեւս 1992թ. հաստատուած իրա-
կան ձեւաչափի վերականգնում, լրիւ
հիմնաւորում ու հասկանալի պատ-
ճառներով:

Ամէն դէպքում, քանի դեռ այս
ուղղութիւններով էական ոչինչ չի
արուած այսօրուայ իրականութիւնն
առաջիմ հայկական կողմին ոչինչ
չի տալիս: Հիմնական պատճառն
այն է, որ դեռեւս չի նիւթականա-
նում ստացած դիրքային առաւե-
լութիւնը:

Եւրապաւոլամենտի ընդունած
բանաձեւը, որը առաջիմ միակ քիչ
թէ շատ շօշափելի արդիւնքն է,
չափազանց թոյլ է ու եթերային,
որովհետեւ այնտեղ չեն երեւում այն
լծակները, այն մեխանիզմները,
որոնք կարող են կաշկանդել
Ատրպէյնանին իր նախաձեռ-
նութիւններում եւ սահմանափակումներ
ներում եւ սահմանափակումներ
դնել դարաբարդեան բանակցութ-
իւններում Պաքուի հաւակնութիւն-
ներում: ԵՊՊ (Եւրապաւոլամենտ)
իր այս բանաձեւով ոչինչ չի պար-
տաւորեցնում Ատրպէյնանին, թէեւ
ունէր դրա խողովակը՝ մասնաւորա-
պէս Արեւելեան գործընկերութեան
ծրագրի շրջանակներում Պաքուի
հետ ասոցացման համաձայնագրի
շուրջ վարուող ֆունդամենտալ
բանակցութիւնները, որը Պաքուն
անգամ մեծագոյն ցանկութեան
դէպքում շրջանցել չէր կարող:

Այս բանաձեւից չի երեւում,
որ Արեւմուտքը հրաժարուած է
Հայաստանի եւ Ատրպէյնանի միջեւ
բոլոր հարցերում հաւասարութիւն
դնելու եւ այդ բալանսը պահպանե-
լու մտադրութիւնից: Հետեւաբար,
բանաձեւից լուրջ սպասելիքներ
չպէտք է ունենալ, մասնաւորապէս
հանդիսանում է ԵՄ-ի ստրատեգիա-
կան գործընկերը հնրեգետիկ եւ
կոմունիկացիոն ոլորտում, ինչը
մշտապէս գերազանցել է ժողովր-
դավարութեան, հումանիզմի հիմ-
նարար արժէքներին:

Սեպտեմբերին նախատեսուած
է ԵԱՀԿ Միւնխեյնի համախաղաղահար-
տարածաշրջանային այցը
ստեղծուած այս նոր իրավիճակում:
Շատ շուտով կը մեկնարկի ԵՄԽՎ
հերթական, աշխատանքային նախաշրջա-
նը, հետո չէ նաեւ ՄԱԿ-ի գլխաւոր
ասամբլեայի աշխատանքների մեկ-
նարկը: Սրանք այն հիմնական ճա-
կատներն են, որտեղ պէտք է յստակ
ուրուագծուի, թէ ինչ ուղղութեամբ
է ընթացք տալու հայկական դիւա-
նագիտութիւնը Ալիեւի տուած այս
եզակի հարաւորութեանը կամ պատ-
րաստուած է արդեօք որեւէ ընթացք
տալ առհասարակ:

«ՀԵՏՔ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՆԱՐ)
ԱՄԵ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ԸՆԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՋԱՅՆԵԼ (626) 797-7680

ԻՍԿ ՍՊԱՆԵՑԻՆ ԵԼՈՅԹԻՑ ՅԵՏՈՅ

Շարունակում էք 2-էն

դիտողութիւն էր անում Սեպտեմբերի 15-ին:

Հայաստանի խնդիրները չափազանց շատ են ու լուրջ, եւ ամիսները պարզապէս շուրջը շուրջ են: Համոզիչ կը լինէր, եթէ Սերժ Սարգսեանը Յունիսին խօսէր կոնկրետ, երեւոյթներով եւ ոլորտներով, իսկ Սեպտեմբերին արդէն հեռացնէր անգործութեան մատնուած, անարդիւնաւէտ պաշտօնեաներին:

Համոզիչ կը լինէր, եթէ Սերժ Սարգսեանն օրինակ հարցնէր գլխաւոր դատախազին եւ ԱԱԾ պետին, թէ ինչքան գործ է չարուցուել ասանք վերահսկիչ պալատի յայտնաբերած չարաշահումների վերաբերեալ: Համոզիչ կը լինէր, եթէ վերահսկիչ պալատի նախագահի խորհրդարանական հաշուետուութեան ժամանակ Սերժ Սարգսեանի ղեկավարած կուսակցութիւնը, որ բացարձակ մեծամասնութիւն է կազմում խորհրդարանում, հարցախեղդ անէր վերահսկիչ պալատի նախագահին եւ հանրութեան առաջ մերկացնէր պետութեան թաւանով զբաղողներին:

Իսկ գուցէ այդ ամէնը չի լինում, որովհետեւ այդ մեծամասնութիւնն ինքն է հենց դրանով զբաղուած, այդ մեծամասնութեան ներկայացուցիչներին կամ նրանց գոքանչներին ու աներորդիներին, քենիներին ու քենեկալներին, եղբայրներին ու քոյրերին պատկանող ձեռնարկութիւններն են կուսակցի մտքը գործարքների «կողմերը», «ատկատի» մասնակիցները, կասկածելի տենդերները շահողները:

Համոզիչ կը լինէր, եթէ Սերժ Սարգսեանն այդ մեծամասնութեանը միասնական ցուցակով համերաշխօրէն չտանէր խորհրդարան, կամ էլ բակերում եւ հրապարակներում կող չանէր քուէարկել տնտեսութեան այս կամ այն ուսուցումը մոնոպոլիզացիայի կամ քուստատա ստացած օլիգարխի կամ թաղային հեղինակութեան օգտին:

Հակառակ պարագայում, ստացում է ինչպէս միշտ, ինչպէս օրինակ խորհրդարանի ընտրութիւնից առաջ, երբ որոշ «օղիոց», մականունաւոր պաշտօնեաներ հրաժեշտ տուեցին իրենց պաշտօններին, բայց խորհրդարանի ընտրութիւնից յետոյ վերատին յայտնուեցին պետական կառավարման համակարգում: Իսկ երբ Սերժ Սարգսեանը տալիս է ինչպէս անունը, ապա արժէ հարցնել նրան՝ իսկ ո՞ւր է հիմա ինչպէս ենք, բացի պաշտօնականութիւնից, է՞լ ինչպէս է նա պատասխան

տուել մօտ տասնեակ հազարաւոր մեռած թոշակառուներին թոշակ բաժանելու համար: Կամ այդ ինչի կեանքի եղբայրը չէ՞ր, որ ՀՀ բարձր հովանու ներքոյ օրերս ընտրուեց Ախթալայի քաղաքապետ:

Սերժ Սարգսեանն առողջապահութեան նախարար Դերոյին նախատում է, թէ ինչ որ բան են պայմանաւորուել դեղերի շուկան կանոնակարգելու համար, բայց ամէն ինչ նոյնն է: Միգուցէ Սերժ Սարգսեանը մէկ առ մէկ պայմանաւորուել է Դերոյի, Գագոյի, Հովոյի, Տյոմի, Սամոյի, Տիկոյի, Վչոյի եւ միւս պաշտօնեաների, պատգամաւորների ու նախարարների հետ, ու գուցէ նրանք բոլորը ձախողել են պայմանաւորուածութիւններն ու խաղացել Սարգսեանի հեղինակութեան հետ:

Բայց դա Սերժ Սարգսեանի խնդիրն է: Հասարակութեանը չի հետաքրքրում, թէ նա ինչ է պայմանաւորուել իր նախարարների ու պատգամաւորների հետ: Հասարակութեանը հետաքրքրում է, որ նրա իշխանութիւնն աշխատում է անարդիւնաւէտ, հետեւաբար պատասխանատուն Սերժ Սարգսեանն է: Բայց, պատասխանատուութեան իրացումն էլ պէտք է լինի առաւել առարկայական եւ շօշափելի:

Այլապէս, այդ գայլալից խօսքերից ոչ մի հիմնարար օգուտ չկայ: Մէկուկէս տարի առաջ էլ Սերժ Սարգսեանը համանման ելոյթներից մէկում «Թիկնապահների շարասիւնները» համար էր տարակուսանք յայտնում ու ասում, թէ իր համար անհասկանալի է այդ ամէնը:

Արդիւնքն ընդամենը եղաւ այն, որ նրա մերձաւոր օլիգարխներին մէկի թիկնապահները ծեծելով սպանեցին անմեղ մարդուն, նրա երկու երեխաներին թողնելով որբ: Իսկ այսօր էլ այդ թիկնապահները դատի ժամանակ տրամադրութիւն ունեն ժպտալու եւ աչքով անելու իրենց ընկերախմբին, իսկ նրանց ղեկավար օլիգարխը համարձակութիւն ունի մեղադրանքներ չլել արդարադատութիւն պահանջող քաղաքացիների հասցէին եւ սպառնալ նրանց:

Համակարգը Սերժ Սարգսեանի խօսքը կարծես թէ լրիւ հակառակ իմաստով է հասկանում: Հետեւաբար, կամ այդ համակարգի հետ այլեւս պէտք չէ խօսել, այլ փոխել եւ վերջ՝ իսկ հասարակութիւնն էլ հաստատ կ'օգնի, կամ էլ պէտք է պարզապէս աւելի ազնիւ լինել հասարակութեան հետ եւ անպայման զգուշացնել ելոյթից առաջ կամ յետոյ:

«ԼՐԱԳԻՐ»

ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ԳՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Շարունակում էք 6-էն

Ծակցութիւն կայ առաջնորդին եւ գործող ղեկավարութեան միջեւ: Շնորհիւ այդ գործակցութեան առաջին անգամ ըլլալով ստեղծուեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյ ծուխը: Ներկայիս թեմական կառույց չկայ, աշխատանքային յայտագիրը առաջնորդին, իրեն համար առաջադրանք ունի նոր ծուխերու կազմութիւնը, նպատակ ունենալով ժողովուրդը մասնակից դարձնել եկեղեցական աշխատանքներուն: Այդ ջանքերուն շնորհիւ կազմուած են նոր ծուխեր, ինչպէս Իրլանտա (Տապլին), Քարտիա (Պիրմիլիկհամ):

Վեց եկեղեցական համայնքներու ներկայութեամբ կարելի պիտի ըլլայ առանձին թեմ ստեղծել մօտիկ ապագային, ըստ հայց. եկեղեցւոյ կանոնադրութեան: Այս նախաձեռնութիւններուն եւ աշխատանքներուն համար առաջնորդը կը վայելէ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի հովանաւորութիւնը:

Չանդրադարձանք լեզուի հարցին: Շատ բնական է, որ տարւող աշխատանքները գնահատելի են եւ անոնք կրնան անգլերէն լեզուով ալ կայացուիլ: Սեր հասկացողութեամբ հայապահպանութիւնը պայմանաւորուած է լեզուով: Ի՞նչ միջոցներ կը գործադրուին հայ լեզուն պահելու համար:

Ամէնօրեայ դպրոց չկայ: Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ միօրեայ դպրոցներ կը գործեն (Կիրակնօրեայ կրօնական իմաստով չէ): Միօրեայ այդ դպրոցներուն մէջ կը դասաւանդուին Արեւմտահայերէնը եւ Արեւելահայերէնը, որպէս լեզուներ: Արեւելահայերէնը Հայաստանէն արտագաղթածներու գաւակներուն համար: Հայ մշակոյթի մասին ընդհանուր գիտելիքներ եւ գաղափարներ կը տրուին: Արեւմտահայերէն եւ Արեւելահայերէն դասաւանդողները ազգային գոհաբեր ոգիով կը կատարեն իրենց ուսուցման պարտականութիւնը, առանց նիւթական որեւէ ակնկալութեան: «Սրբազան խենթեր» անշո՛ւշտ, կը յարեմ:

Իմ կարծիքովս կ'ըսէ Հրաչ, մասնաւորաբար խօսակցական լեզուի համար ամենակարեւորը տունն ու ընտանիքն են: Կերպով մը

ամէնօրեայ դպրոցը, անփոխարինելի ըլլալով հանդերձ, փոխարինուած պիտի ըլլան տունով եւ ընտանիքով:

Դպրոցին բացակայութիւնը պիտի լեցուի տան մէջ հայերէն խօսակցութեամբ: Հայ մանուկը անգլիական ամէնօրեայ դպրոցին մէջ անգլերէն լեզուն կը զարգացնէ եւ նաեւ անգլիական մտածողութիւնը: Հայերէնի բառապաշարը կը մնայ տկար: Ըստ այս իրակաւորութեան, սփիւռքի մէջ ամէնէն լուրջ խնդիրը լեզուի հարցն է: Նոյնի՛սկ, երբ կ'աշխատինք, մեր մանուկներուն հայ լեզուն սորվեցնելով կենդանի պահել անոնց հայախօսութիւնը, խնդրուած կ'ըլլայ օտար բառերով: Գործածած մէկ նախադասութեան մէջ երբեմն կը պատահի որ մէկէ աւելի օտար բառեր ըլլան: Ասիկա անխուսափելի է: Այս իրականութենէն եւ այս փորձառութենէն մեկնելով կարելի չէ միայն լեզուով պայմանաւորել հայ ըլլալը:

Իսկ հայ մշակոյթը, հայ պատմութիւնը, հայ անցեալը կ'ըսեն Գրաչին:

Ինձի համար կը հաստատէ, Հրաչ հայապահպանում կը նշանակէ հայ մշակոյթը ապրիլ մեր առօրեային մէջ: Կարգալով մեր բանաստեղծները անոնց մասին խօսելէ աւելի, անոնց բանաստեղծութիւնները ընթերցել տալով: Սեր երաժշտութեան մասին խօսելէ աւելի, Կոմիտաս եւ ինչպէս որեւէ, ունկնդրել տալով: Նկարչութեան մասին խօսելէ աւելի մեր մանրանկարիչներու եւ գեղանկարիչներու՝ ինչպէս Մարտիրոս Սարգսեանի Մինաս Աւետիսեանի գեղանկարները դիտելով: Մէկ խօսքով մշակոյթը մեր կեանքին կապել:

Ինչ կը վերաբերի գաղութի ապագային, Լոնտոնը ըլլալով աշխարհի առաջնակարգ քաղաքներէն մէկը, Լոնտոնէն նոր տեղաշարժեր տեղի չեն ունենար:

Չրոյցէն ետք Հրաչին կը յանձնեմ «Կամար» գրականութեան եւ գեղարուեստի անկախ պարբերաթերթի 15-րդ համարը եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան ձեռնարկած Արեւմտահայ լեզուի պաշտպանութեան ծրագրին նուիրուած ուղեցոյցը, Արամ Ա. կաթողիկոսի նախաձեռնութեամբ:

Պ. Ս.

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Մասիս» շաբաթաթերթի բարեկամ մը, էտի Պոսմոնեանի եւ Սարին Գալուստեանի նշանախօսութեան ուրախ առիթով կը շնորհաւորէ գոյգի ընտանիքները եւ առ այդ 150 տոլար կը նուիրէ «Մասիս»ի ֆոնտին

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ


1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ Հին Գիրքերու Նորոգութեան Համար Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ

